Ազգ
Azg
9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ՈՒՐԲԱԹ 159(4777)
ISSN: 1829-1651

# Շառլ Ազնավուր. Սպանել են, ցանկացել են սպանել



«Դա (Ցեղասպանությունը-Ա.Հ.) մի բառ է, որ խանգարում է, որն ի վերջո ինձ խանգարում է», ֆրանսիական հեռուստաընկերություններից մեկի եթերում հայտարարել է Շառլ Ազնավուրն այն հարցին ի պատասխան, թե իր «Մի դռնից մյուսը» գրքում ինչու է գրել. «Ցեղասպանությունը մի բառ է, որը խանգարում է»:

«Այն, ինչ հիմա կասեմ, գուցե որոշ հայերի կհանի իմ դեմ, բայց դա սարսափելի չէ: Եթե իսկապես թուրքերն այնքան պարկեշտություն ունենան ասելու, որ Ցեղասպանություն բառն է, որն իրենց խանգարում է, մենք մի այլ բառ կգտնենք, որպեսզի սահմանները բացվեն, եւ որ թուրքական կառավարությունը, չեմ ասում՝ թուրքերը, այլ՝ թուրքական կառավարությունը մտածի երկխոսություն սկսել մեզ հետ», իր միտքը շարունակել է Ազնավուրը:

Մինչդեռ թուրքական մի շարք լրատվամիջոցների համար համատեքստից հանված առաջին արտահայտությունը, որոշ խմբագրմամբ, լրիվ բավարարել է Շառլ Ազնավուրի անունը հոլովելով սենսացիոն հրապարակումներ անելու համար՝ աղավաղելով եւ խեղաթյուրելով Ազնավուրի խոսքերը, թե իբր, ըստ Ազնավուրի, հայ-թուրքական երկխոսության համար այլ բառ է հարկավոր, քան Ցեղասպանություն բառը:

Այն, որ թուրքական մամուլն ու դրա նմանակմամբ՝ նաեւ ադրբեջանականը, առավել քարոզչական են, քան լրագրողական, նոր հանգամանք չէ: Դա է պատճառը, որ հայ մասնագետներից շատերը, նաեւ սփյուռքի մեծաթիվ ներկայացուցիչներ չեն ցանկանում առնչվել թուրք լրագրողների հետ՝ հետագայում աղավաղումների ու խեղաթյուրված տեղեկությունների դեմ պայքարելու անիմաստության պատճառով:

Հստակ է, որ Ազնավուրի համար 20-րդ դարասկզբի իրադարձությունները Ցեղասպանություն կոչելը հարցականի տակ չի դրվում. մինչդեռ թուրքական մամուլն ուղղակի հենց այդ սոուսով էլ մատուցել է Ազնավուրի կիրակնօրյա հեռուստախոսքը:

Առաջին հարցից հետո Ազնավուրը պատասխանել է հարցադրմանը, թե ինչու է թուրքերի համար այդքան դժվար ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Ըստ ֆրանսիական լրատվամիջոցների՝ Ազնավուրը պատասխանել է. «Եթե հիշողությունս չի դավաճանում, երբ մենք խմում ենք, ասում ենք՝ առողջության համար, երբ հրեաներն են խմում, ասում են՝ կյանքիդ համար, երբ թուրքերն են խմում, ասում են՝ պատվիդ համար: Կարծում եմ, հարցի հիմնական մասն այստեղ է»:

Ազնավուրն ավելացրել է, որ մեկընդմիշտ պետք է թուրքերին հասկացնել, որ պատիվը երկու կողմ ունի. «Միայն ինքդ քեզ պաշտպանելով չէ, պետք է նաեւ ընդունել եղելությունը, նաեւ այն բանի համար, որ երիտասարդության ուսերին անհաղթահարելի գործ չմնա»:

«Մեկուկես միլիոն, սա իսկական թիվ է մի փոքր երկրի համար» հարցին Ազնավուրը արձագանքել է. «Երկու կամ մեկուկես միլիոն, նույնն է: Երբ սպանում են երկու երեխայի կամ մեկ եւ կես միլիոն հայի կամ վեց միլիոն հրեայի, նույնն է: Սպանել են: Ցանկացել են սպանել: Սա է կարեւորը»: Իսկ որ այդ անմեղ զոհերը մնացել են առանց գերեզմանի, Ազնավուրին ցավ է պատճառում. «Այո, դա է ինձ ցավ պատճառում: Դեր-Զորում կան վայրեր, որտեղ մինչեւ օրս փոշիների մեջ, ավազի մեջ ոսկորներ են գտնվում»:

**Ա. Հ.**

# Մոգական կայքէջը

## *Հանուն ինչի՞ են բացահայտումներ անում WikiLeaks-յան հաղորդագրությունների «աղբյուրները»*

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**




Ստալինյան իրականության տարբեր բնութագրիչներից, որ պակաս դերակատարություն չունեին ողջ համակարգի գործունեության համար, անանուն բողոքներն ու հաղորդագրություններն էին, որոնք կարելի է մատնություն որակել, եթե, իհարկե, մատնելու բան կար, այլ ոչ զուտ զրպարտություն ու հերյուրանք: Թեեւ վերջինս առավել հաճախ պատահում էր ստալինյան ռեժիմի ժամանակ ու որոշ առումով նաեւ ռեժիմի գոյատեւման հիմք էր, հստակ էր, որ միայն Ստալինով չէր որոշվում այդքան ողբալի վիճակն, այլեւ մարդկանց վատագույն որակների դրսեւորմամբ: Ստալինը հո մեղավոր չէր, որ մատնել ու զրպարտել ցանկանում ու անում էին շատերը, ընդ որում, դրա դիմաց մեծ մասամբ ոչինչ չստանալով:

WikiLeaks-յան բացահայտումները եւս մանր-մունր մատնությունների են նմանվում, հատկապես երբ վերջին հրապարակումներում դուրս չեն մնացել ամերիկյան դեսպանատների «ինֆորմատորների» անունները: Խոսքը տարբեր չինովնիկների, նախկին ու ներկա պաշտոնավարողների եւ անհասկանալի դեր կատարող գործիչների՝ ԱՄՆ դիվանագետների հետ ունեցած զրույցներին է վերաբերում:

Այնպիսի ջերմեռանդությամբ ու ակնածանքով են որոշ գործիչներ իրենց դարդուցավը պատմում ամերիկյան դիվանագետներին, որ մնում է ենթադրել, թե նրանց առնվազն ամերիկյան քաղաքացիություն են խոստացել: Բայց քանի որ դեպքերի մեծամասնության պարագայում այդպիսի բան լինել չի կարող, մնում է, որ մերոնք իրենց մատնությունները իրականացրած լինեն կամ ամերիկյան վիզա անարգել ստանալու, կամ էլ ժողովրդավարական արժեքների պաշտպանության համար:

*Տես էջ 4*

# «Բանակում դեռ գործում է գաղութային, թաղային օրենքը»



**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**«Բանակում հանցագործությունները պետք է կանխվեն, կատարվածները բացահայտվեն եւ կանխարգելիչ գործողություններ մշակվեն նոր ողբերգական դեպքերի համար»: Սա ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրայր Կարապետյանի տեսակետն է:**

**Բանակում բարեփոխումներ կատարելու նպատակով պետք է ԶՈՒ մի շարք կանոնագրքեր ընդունվեն: Դրանցից մեկը՝ ԶՈՒ ընդհանուր կանոնագիրքը արդեն պատրաստ է խորհրդարանում ներկայացմանը:**

**«Բանակը սկսվում է զորակոչից: Մեզ չի գոհացնում այն իրավիճակը, երբ անհատական մոտեցում չի լինում զորակոչիկին, երբեմն հիվանդներ են զորակոչվում, կամ մարդիկ, որ իրենց տեղում չեն, եւ կարծում ենք, ճիշտ ժամանակն է, որ պարտադիր ծառայությանը զուգահեռ ներդվի նաեւ կամավոր ծառայության սկզբունքը», ասաց Կարապետյանը՝ հավելելով, որ դա պայմանագրային զինծառայությունը չէ:**

*Տես էջ 2*

# Կարինե Ղազինյանը՝ Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպան



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը երեկ հրամանագիր է ստորագրել Կարինե Ղազինյանին Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնից ազատելու մասին՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ:

Ըստ պաշտոնական հաղորդագրության, հանրապետության ղեկավարի մեկ այլ հրամանագրով, Կարինե Ղազինյանը նշանակվել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի դեսպան (նստավայրը՝ Լոնդոն): Նախկին Խորհրդային Միության Մոզամբիկի եւ Պորտուգալիայի դեսպանություններում աշխատանքին գրեթե 10 տարվա ընդմիջումից հետո հաջորդել է Ղազինյանի՝ Ռումինիայում որպես ՀՀ գործերի հավատարմատար, ապա նաեւ դեսպան նշանակումը, որից հետո՝ 2001-2009, Ղազինյանը եղել է Հայաստանի դեսպանը Գերմանիայում:

2009-ի մարտից Հայաստանի փոխարտգործնախարարի պաշտոնում Կարինե Ղազինյանը գլխավորում էր Հայաստան-Եվրոմիություն Ասոցացման համաձայնագրի բանակցությունները:

# Քննադատողներին հայրենասեր չհամարելու ժամանակն անցել է

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**Ստեփանակերտ-Երեւան**

Ստեփանակերտում Հայաստանի թերթերը չկան: Մի երկու տարի առաջ մեկ օրվա հնությամբ համարյա բոլոր կարեւոր թերթերը կգտնեիր, հիմա թերթի կրպակներն ամեն ինչ ծախում են, բայց ոչ օրվա մամուլ: Հայաստանից «Հայացք» ու «Երրորդ ուժ» են միայն, ինչն այս թերթերի հովանավորների ղարաբաղյան հետքի մասին է գուցե վկայում, իսկ ընդհանրապես՝ խաչբառեր են, զանազան ամսագրեր ու... հազար ու մի մանրուք: Ստեփանակերտի Ազատության հրապարակին հարակից կրպակներից մեկի կրպակավարուհին, որ ոչ ուզեց ներկայանալ, ոչ էլ մեր լուսանկարելու պահին իր տեղում մնաց, բացատրեց, որ «Արցախմամուլն» էլ չկա, քանի որ այս կառույցը բոլոր թերթերին մեծ գումար էր պարտք: Իսկ հիմա իրենցով զբաղվող, թերթ բերողհասցնող, Հայաստանի թերթերի հետ պայմանագիր կապող չկա, իրենք էլ աշխատում են, ինչպես կարողանում են: Ուրեմն՝ իզուր են



«**Ազգի**» համար այդքան ջանում Արցախի Ազգային ժողովի պատգամավոր, վերլուծաբան Վահրամ Աթանեսյանը եւ «**Ազգի**» թղթակից Կիմ Գաբրիելյանը. նրանց հրապարակումներով մեր թերթը, փաստորեն, նրանց չի հասնում:

Ամեն քաղաքում ապրելակերպի մասին նախ իմացիր շուկայից: Այստեղ միանգամից շատ բան է պարզվում: Ստեփանակերտի շուկան էլ բաց գիրք է, որը կարդալու դեպքում միանգամից շատ բան է իմացվում:

*Տես էջ 3*

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Արվեստաբան Աստղիկ Ստամբուլցյանի անդրադարձը Եղիշե Թադեւոսյանի ստեղծագործությունների՝ ոչ այնքան հայտնի էջերին՝ սեփական երազների նկարչական արտահայտություններին:

Սփյուռքահայ նկարիչներ շարքից «Իրանական ջրանկարչության ռահվիրան՝ Սմբատ Տեր-Կյուրեղյան», Հակոբ Ծուլիկյանի ներկայացմամբ:

Գերմանական Հալլեի համալսարանի հայագիտական ամբիոնի բացման մեկ տարվա առիթով՝ Անահիտ Հովսեփյանի հարցազրույցը ամբիոնի վարիչ Արմենուհի Դրոստ Աբգարյանի հետ:

Ուղեգրության էջերից-Լեւոն Լաճիկյանի լիբանանյան տպավորությունները:

Տաթեւիկ Ստեփանյան. ընդհանուր ակնարկ Իրանի ճարտարապետության պատմությանը:

**Ս. Բ.**

# Մրցունակության բարձրացում, վարկանիշի պահպանում եւ հարկային եկամուտների ապահովում

Հայաստանի ֆուտբոլի հավաքականին կառավարության նիստի սկզբում շնորհավորելուց հետո, վարչապետ **Տիգրան Սարգսյանը** երեկ անդրադարձավ մեր տնտեսության երեք կարեւոր խնդիրներին՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած Հայաստանի ազգային մրցունակության զեկույցին, Fitch Ratings միջազգային վարկանիշային կազմակերպության կողմից Հայաստանին տրված վարկանիշին եւ հարկային եկամուտների հավաքման խնդրին:

## Մրցունակության բարձրացում գրեթե բոլոր ցուցանիշներով

Անդրադառնալով Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած ազգային մրցունակության զեկույցին՝ Տիգրան Սարգսյանն ընդգծեց Հայաստանի առաջընթացը վեց աստիճանով: Նա նշեց, որ առաջընթացը կլիներ շատ ավելի բարձր, եթե չլիներ բարձր գնաճի ցուցանիշը, որը 15 կետով նահանջ արձանագրեց: «Մեր ուժեղ կողմերը, որտեղ մենք մրցունակ ենք, պետական քաղաքականության թափանցիկության աստիճանն է. 142 երկրների շարքում թափանցիկության աստիճանով մենք զբաղեցնում ենք 35-րդ տեղը: Մենք նաեւ ենթակառուցվածքների տեսակետից 48 փայլ առաջ ենք շարժվել հենց տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում: Առաջին հերթին դա վերաբերում է բջջային հեռախոսների հասանելիությանը, ինտերնետի բնագավառում կատարված փոփոխություններին: Ինտերնետի հասանելիությունը Հայաստանում նույնպես էապես բարելավվել է՝ և՛ գներն են նվազել, և՛ սպառողների քանակն է ավելացել: Մենք նաեւ լուրջ առաջընթաց ունենք բարձրագույն կրթության եւ վերապատրաստման ոլորտներում՝ 17 եւ 19 փայլով: Մասնավորապես, միջնակարգ կրթության ներգրավվածության աստիճանով մենք 52-րդ տեղում ենք, իսկ բարձրագույն կրթության ներգրավվածությամբ՝ 49-րդ տեղն ենք զբաղեցնում 142 երկրների շարքում», ասաց վարչապետը: Նա համոզմունք հայտնեց, որ 2011-ի տվյալների հիման վրա ազգային մրցունակության զեկույցը կլինի ավելի լավը, քան այս զեկույցը, որը ներառում է 2010-ի եւ 2011-ի առաջին եռամսյակի ցուցանիշները: Դա պայմանավորված է լինելու նախ գնաճի կտրուկ նվազմամբ, որը, ինչպես հայտնեց վարչապետը, արդեն ոչ թե 10 տոկոսային, այլ 5 տոկոսային շրջանակի մեջ է: «Այսինքն, շուրջ երկու անգամ գնաճային ճնշումները Հայաստանում նվազել են, եւ դա իր դրական ազդեցությունն է թողնելու», նշեց վարչապետը: Երկրորդ հանգամանքը բիզնես միջավայրը բարելավելու ուղղությամբ կառավարության իրականացրած բարեփոխումներն են, որտեղ վարչապետի հավաստիացմամբ, 2011-ի արդյունքներով հինգ ցուցանիշներով լուրջ առաջընթաց ենք արձանագրելու:

## Հայաստանի արտաքին պարտքի բեռն ավելի ցածր է նմանատիպ երկրների համար

Տիգրան Սարգսյանի մատնանշած հաջորդ հանգամանքը Fitch Ratings միջազգային վարկանիշային կազմակերպության հրապարակած Հայաստանի Հանրապետության վարկանիշն է, որը մնացել է նույնը՝ BB, կանխատեսումը՝ կայուն: Վարչապետը այս զեկույցից հատուկ ուշադրություն հրավիրեց արտաքին պարտքի ցուցանիշի վրա: «Զեկույցում նշված է, որ BB վարկանիշ ունեցող երկրների շրջանակում Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի բեռը գտնվում է կառավարելիության մակարդակում, եւ միջին ցուցանիշից բեռն ավելի ցածր է նմանատիպ երկրների համար: Այսինքն, ես ցանկանում եմ ասել, որ իրականում պետք չէ ուռճացնել արտաքին պարտքի բեռի խնդիրը: Այսօր այն գտնվում է 40 տոկոսի շրջանակում եւ ամբողջությամբ բաղկացած է երկարաժամկետ ու արտոնյալ վարկերից, որոնք մենք ստացել ենք միջազգային կազմակերպություններից», շեշտեց նա:

## Կառավարության բոլոր անդամները պետք է պատասխանատու լինեն հարկերի հավաքման համար

Անդրադառնալով հարկային օրենսդրության բարելավմանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը կարեւոր համարեց 2012-ին հարկերի հավաքման հարցը: «Ցանկանում եմ՝ բոլորս գիտակցենք, որ դա միայն պետական եկամուտների կոմիտեի գործառույթը չէ: Կառավարության բոլոր անդամները պետք է պատասխանատու լինեն հարկերի հավաքման համար», ասաց վարչապետը՝ թվարկելով այն ոլորտները, որտեղից ակնկալվում է եկամուտների աճ: Դրանք են՝ առաջին հերթին էներգետիկան, ապա՝ քաղաքաշինությունը, տրանսպորտը եւ կապը, առողջապահությունը: Տիգրան Սարգսյանն ավելացրեց, որ մնացած բոլոր նախարարությունները նույնպես պետք է վարչապետին հաշվետվություն ներկայացնեն, թե ինչ միջոցառումներ են իրականացնում 2012-ի պետական բյուջեի եկամուտներն ապահովելու համար:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Երեւանի օրը եւս կնշվի սեպտեմբերի 21-ին

Հիմք ընդունելով Երեւանի քաղաքապետի առաջարկությունը եւ նկատի առնելով, որ 2011-ի սեպտեմբերի 21-ին նշվում է Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձը, կառավարությունը երեկ որոշեց 2011-ին Երեւանի օրը բացառության կարգով նշել սեպտեմբերի 21-ին:

# Էլեկտրաէներգիա արտադրող լրացուցիչ 450 մվտ հզորություն

Կառավարությունը երեկ հաստատեց «Հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը», որի իրականացմամբ, երկրում լրացուցիչ կստեղծվի էլեկտրաէներգիա արտադրող 450 մվտ հզորություն, կընդլայնվի սեփական վերականգնվող էներգառեսուրսների օգտագործումը, զգալիորեն կնվազի Հայաստանի էներգետիկ կախվածությունը ներկրվող ածխաջրածնային վառելիքից, կկրճատվի դրա այրումից առաջացող ջերմոցային գազի արտանետումը մթնոլորտ: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին առաջարկվել է ոլորտի կարգավորման իր գործառույթներն իրականացնելիս առաջնորդվել սույն որոշմամբ հաստատված ռազմավարությամբ: Մեկ այլ որոշմամբ, նույն հանձնաժողովին առաջարկվել է փոքր ՀԷԿ-երի համար առավելագույն հզորություն սահմանել մինչեւ 30 մվտ տեղակայված հզորությունը:

**Ա. Ս.**

# Միջհամայնքային մշակութային ցուցահանդես եւ մրցույթ-փառատոն Գյումրիում

## *ՏԻՄ համակարգի 15-ամյակի առթիվ*

**Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված հանրապետական միջոցառումների շրջանակներում, ՀՀ նախագահի բարձր հովանու ներքո երեկ Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի մարզերի ու համայնքների գեղարվեստական ինքնագործ խմբերի մրցույթ-փառատոն՝ ժողովրդական երգ, ժողովրդական պար եւ ազգային նվագարաններ անվանակարգերով, իսկ քաղաքի կենտրոնական հրապարակում՝ «Արտէքսպո» միջհամայնքային մշակութային առաջին ցուցահանդեսը:**

**Հատկապես մարդաշատ էր հրապարակում կազմակերպված միջոցառումը, որն իր ընդգրկմամբ (մասնակցում էին հանրապետության բոլոր մարզերը, առանց Երեւանի) աննախադեպ էր Գյումրիում: Հրապարակի կենտրոնում պատրաստված միանման տաղավարների յուրաքանչյուր շարքում ներկայացված էր հանրապետության մեկ մարզը իր մարզային եւ համայնքային մշակութային օջախներով՝ գրադարաններով, թանգարաններով, մշակույթի կենտրոններով ու դրանց ձեռքբերումներով, անհատ արվեստագետներով ու ոսկեձեռիկ վարպետներով, նրանց գործերով եւ այլնով: Իսկ Հայաստանի ազգային գրադարանի «Բիբլիոբուս» շրջիկ գրադարանը ներկայացրել էր հանրապետության մարզերին նվիրված գրքերի, ալբոմների, քարտեզների եւ այլ հրատարակությունների բացօթյա ցուցահանդես:**

**Ներկայացված համայնքները, մշակույթի օջախներն ու մյուս մասնակիցները մրցում էին ինը անվանակարգերում՝ «Լավագույն մշակույթի տուն», «Լավագույն թանգարան», «Լավագույն գրադարան», «Լավագույն գյուղական համայնք», «Լավագույն քաղաքային համայնք» եւ այլն: Մրցույթի արդյունքները կամփոփվեն համապատասխան հանձնախմբի կողմից: Ցուցահանդեսը, որ նաեւ միջմարզային շփումների լավ առիթ էր, պետք է նպաստի մարզերում մշակութային կյանքի խթանմանը:**

**Բազմամարդ հրապարակում մինչեւ երեկո հնչում էր հանրապետության քաղաքների ու մարզերի կոլեկտիվ եւ անհատ կատարողների երգն ու պարը: Միջոցառումներին ներկա եղան եւ տաղավարների ցուցադրանքին ծանոթացան ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:**

**Գ. Մ.**

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# «Բանակում դեռ գործում է գաղութային, թաղային օրենքը»

*1-ին էջից*

Ընդունելով «**Ազգ**»-ի մտահոգությունը, որ հաճախ բժշկասոցիալական փորձագիտական հանձնաժողովում տեսողական լուրջ խանգարումներ ունեցող երիտասարդին, սրտի արատ կամ հոգեկան խնդիրներն ունեցողներին ուղարկում են բանակ, իսկ նրանք, ովքեր առողջ են եւ պիտանի ծառայության, կլորիկ գումարի միջոցով հիվանդություն են նկարում եւ ազատում, ասաց. «Շատ ճիշտ է: Վերջին դեպքն էլ՝ կապված Հովհաննես Վարդանյանի խելագարության հետ, եկավ ապացուցելու, որ այս խնդրին պետք է լուրջ ուշադրություն




դարձվի: Դրա համար հավաքակայանում զինվորի պիտանիության մասին վերջնական որոշումը այսուհետեւ կտան ոչ թե հավաքակայանի բժիշկները, այլ ռազմաբժշկական հանձնաժողովը: Սա ինչ-որ չափով նաեւ հակակոռուպցիոն միջոցառում է»:

Զինվորների արձակուրդ գնալու խնդիրը նույնպես կանոնակարգման անհրաժեշտություն է զգում: Կարապետյանը վստահ է՝ այն պետք է կանոնակարգվի օրենքով, այլ ոչ հրամանատարի քմահաճությամբ: «Պետք է վերացվի հրամանատարի սուբյեկտիվ մոտեցումը, թե ինքը կբարեհաճի՞ 6 ամիս հետո զինվորին ուղարկե՞լ արձակուրդ, թե՞ ոչ»: Կարապետյանը համոզված է՝ բանակում պետք է օրենքները շատ գործեն, որպեսզի ցավալի ողբերգական դեպքերը բացառվեն, սակայն միայն օրենսդրական նախաձեռնությունները բավարար չեն ողբերգական դեպքերը բացառելու համար: Ինչպես յուրաքանչյուր ոլորտում, այստեղ էլ դրանք չպետք է մնան թղթի վրա: «Սա տարիների կուտակած խնդիր է, եւ խորհրդային բանակի կնիքը դեռեւս կա մեր բանակի վրա, իսկ մենք ուզում ենք, որ մեր զինված ուժերը լինեն ժամանակին համապատասխան ու հստակ օրենքներով շարժվող: Այն հրամանատարներն ու սպաները, որ չեն համապատասխանում իրենց կոչմանը, անկախ իրենց ունեցած ծառայություններից, պիտի բանակում չլինեն: Սա մեկ կամ հինգ տարվա լուծման խնդիր չէ, բայց մենք պարտավոր ենք շատ արագ լուծել»: **Հրայր Կարապետյանը** ցավում է, որ այսօր «Եղնիկներ» զորամասում նման դեպքեր են տեղի ունենում: «Ես էլ իմ ներդրումն եմ ունեցել այդ զորամասի ստեղծման գործում եւ հիմա ցավում եմ»:

Կարապետյանն ասում է, որ կան զորամասեր, որտեղ հրամանատարը, սպայական կազմը շաբաթներով զորամաս չեն մտնում՝ հետաքրքրվելու, թե ինչ է կատարվում: Նրանց բացակայության ժամանակ բանակում այլ օրենքներ են լինում: Բանակը վերածվում է «գաղութի»: Բանակում դեռ գործում է «գաղութային, թաղային օրենքը»: Անդրադառնալով բանակում մահվան դեպքերին, Կարապետյանն ասաց, որ նախարարության տվյալներով մահացության դեպքերը բանակում նվազել են: Նա մահացությունների մասով որեւէ թիվ չհրապարակեց՝ ասելով, որ նման լիազորություն չունի: Նա նաեւ չհրապարակեց, թե սպայական կամ հրամանատարական անձնակազմի քանի ներկայացուցչի նկատմամբ է քրեական գործ հարուցված եւ քննություն ընթանում: Կարապետյանը խոստովանեց, որ վստահում է Սեյրան Օհանյանին: «Նա մտավորական է, պատերազմի բովով անցած մարդ, ունի բարեփոխումների վերաբերյալ բազմաթիվ ծրագրեր, եւ համոզված եմ, որ դրանք արդյունավետ կլինեն»:

*Հ. Գ. Երեկ կառավարության նստավայրից մեկնարկեց բանակում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների հարազատների երթը: «Բանակն իրականում» նախաձեռնության կազմակերպած «Սեւազգեստ մայրերի» ակցիայի մասնակիցները այնուհետեւ շարժվել է դեպի նախագահական նստավայր: Նրանք ձեռքերին պահել էին պաստառներ՝ «Բանակը՝ սպանդանոց», «Ես որդի չունեմ մարդակեր բանակի համար», «Մարդասպան բանակ» գրություններով, եւ պահանջում էին արդար քննություն անցկացնել ու պատժել իրենց որդիների սպանողներին: Վերջին 10 օրվա ընթացքում բանակում աղմկահարույց երեք դեպք տեղի ունեցավ: Երկու զինվոր սպանվել էր, մյուսին էլ ծնողները հայտնաբերել էին Նորքի հոգեբուժարանում՝ խելագարված վիճակում: Երեք դեպքերի կապակցությամբ սկսվել է նախաքննություն:*

*Սեպտեմբերի 7-ին Հայկ Վասիլի Մկրտչյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում ձերբակալվել է ժամկետային զինծառայող Լենդրուշ Նազլուխանյանը: Սակայն ծնողները չեն հավատում, որ իրենց որդուն անզգուշաբար են սպանել: Հայկը վիրավորվել է երկու տեղից: Հայկի հարազատների պնդմամբ՝ նրա մարմնից հայտնաբերվել է 14 փամփուշտ:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

## Քննադատողներին հայրենասեր չհամարելու ժամանակն անցել է

*1-ին էջից*

Նախ` որ Արցախ մեծ թվով օտարերկրացիներ են գալիս, մեր այցի պահին շուկայում մի շատ մեծ խումբ ֆրանսիացիներ կային, որոնք նուռ ու թուզ էին լուսանկարում եւ ժպտալով հաց գնում: Վաճառողներն էլ ասում էին, որ ամենալավ գնորդը նրանք են, եւ ամեն օր մեծ թվով արտասահմանցի գնորդներ են գալիս շուկա, լուսանկարում են, գնում, անգամ տեղում ուտում եւ գնում: Երկրորդ ակնհայտ բանն այն էր, որ շուկայում վաճառվող գյուղատնտեսական արդյունքի մեծ մասը բերվում էր.... Երեւանից, այո: Ամեն ինչ համարյա Երեւանի Մալաթիայի շուկայից է, այդ պատճառով մի հարյուր դրամով գները Մալաթիայի շուկայից բարձր են: «Հաշվել ենք` միրգ ու բանջարեղեն մեծ քանակությամբ բերելու դեպքում օգուտ մնում է, ապրել լինում է»: Վարունգ-պոմիդոր, խաղող, դեղձ եւ բազմաթիվ այլ ապրանքներ, ուրեմն, մեր հանրահայտ Մալաթիայի շուկայից երկար ճանապարհ են անցնում դեպի Արցախ: Ու այդպես այստեղ էլ մրցակցության չի դիմանում արցախցի գյուղացին, թեեւ սալորը, ընկույզը, հոնը, լոբին, թուզն ու նուռը արցախյան են, բայց սրանք էլ թանկ են, միայն թուզը կարելի էր 500 դրամով գնել: Հենց շուկայի կողքին արմավիրցի մի երիտասարդ կին մի փոքրիկ տարածք էր վարձել ու վաճառում էր սեփական արտադրության լոլիկ, սմբուկ, խաղող ու դեղձ. «Արդեն երկրորդ տարին է` ամուսնուս հետ ամռանը գալիս տուն ու կրպակ ենք վարձում ու վաճառում ենք մեր աճեցրածը: Երեւանի գներից մի հիսուն դրամով է ավել ամեն ինչի գինը , բայց ինչ արած, էլի ոչինչ, առեւտուր լինում է»: Կինը ոչ մի տրամաբանված պատասխան չտվեց, թե ինչո՞ւ են գերադասում այդքան հեռու Ստեփանակերտը Երեւանից:

Խանութներում վաճառվում են Երեւանից բերված քաղցրավենիք, չոր խմորեղեն ու այլ տեսականի:

«Մերը Ղարաբաղի այլուրն է` հացը, ու մեկ էլ` լավ օղի ենք արտադրում», Արցախի հայերենով ասում է շուկայի հարակից խանութներից մեկի ռուս վաճառողուհին, որն իրեն մաքուր ղարաբաղցի էր համարում: Արցախում Երեւանի մթերքների համեմատ միակ թանկ ապրանքը միսն էր, տավարի միսը` 2300, խոզինը` 3300 դրամ արժեին: Հագուստի կրպակի կինը, որն այդ օրը ոչինչ չէր վաճառել, պատմում է, որ մարդկանց ձեռքին փող չկա, առեւտուրը դանդաղ-դանդաղ է շարժվում: Իսկ հագուստը թուրքական ու չինական է, Երեւանով գալիս-մեկնում են այդ երկրներ, ինչպես եւ Հայաստանի ապրանք բերողները, սակայն Հայաստանի գներից ցածր գներով են վաճառում, որովհետեւ առնողն է քիչ:

Ստեփանակերտում հյուրանոցների կառուցման մի իսկական բում է: Փաստորեն Ղարաբաղում ոչ միայն Շուշին են ուզում զբոսաշրջության կենտրոն դարձնել, այլեւ Ստեփանակերտը, որտեղ մի քանի տարի առաջ մեկ-երկու հյուրանոց կար, այժմ երկու իրար զուգահեռ փողոցներում մեկ տասնյակից ավելի մեծ մասամբ բարձրակարգ հյուրանոցներ հաշվեցի, եւ ճիշտն ասած` գներն էլ հարցրի, բավական թանկ են: Կենտրոնում, օրինակ, Ազգային ժողովի կողքին բազմած «Արմենիայում» ստանդարտ համարը մեկ հոգու համար քսանինը հազար դրամ արժե օրը, ավելի խորքերում` ութ-տասնհինգ հազար: Այդքան հյուրանոց 40 հազարի չափ բնակիչ ունեցող քաղաքում նոնսենս է, մանավանդ որ ես միակ ապրողն էի մի հյուրանոցում, որտեղից առավոտ վաղ չկարողացա մեկնել, քանի որ հյուրանոցի դուռը փակել էին վրաս ու գնացել քնելու (այդպիսի բան միայն Ղարաբաղում կարող է լինել` բարկանալու հետ մի լավ զվարճացա). «Ողջը հյուրանոց ու խանութ է` էդ երկուսը բնակիչներից շատ են», իբր կատակում էր մի կին: Հյուրանոցները պատկանում են տեղացի, երեւանցի, արտերկրի մեծահարուստներին, որոնք տուրիստների հոսքը նկատի ունենալով` իրենց բիզնեսը կառուցում են ոչ թե արտադրությունների, այլ հյուրանոցների վրա, կամ ալա Հյուսիսային պողոտա շենք են սարքում-վաճառում, այդ թվում` հատկապես երեւանցի գործարարները:

Ամեն տեսակի մարդ կա Ստեփանակերտում` Երեւանից աշխատողներ (հատկապես շինարարություններում), այլ երկրների ֆիրմաների եւ ներկայացուցչությունների աշխատակիցներ` բնիկ ստեփանակերտցիներից կտրուկ տարբերվող արտաքինով ու հագուկապով (ընդ որում` այս ֆիրմաներում աշխատող արցախցի երիտասարդ մարդիկ շատ արագ են նմանվում արտերկրից եկածներին):

Երիտասարդ մարդկանց հետ մեր զրույցները բացեցին երկու տեսակի գերակշռող կարծիքներ: Մի մասը (աշխատանք ունեցողները) ընդհանրապես շատ էլ չէին բողոքում կյանքից, տանելի էին համարում ապրուստը, թեեւ չէին զլանում շեշտել, որ միջին աշխատավարձը շատ ցածր է Արցախում: Որպես դրական



պարագա նշում էին նաեւ նոր ծնվող երեխաների կառավարության սահմանած փոխհատուցումների գործոնը, Ստեփանակերտի արագ զարգացումը, եկող-գնացողների աշխույժ եռուզեռը: Ուրիշներն, ընդհակառակը, բողոքում էին, թե վաթսուն հազար դրամով թող իրենք ապրեն (նկատի ունեին իշխանություններին), որ ամեն ինչ իրենցով եւ իրենց մտերիմներով ու ազգականներով են արել, սովորական տղերքի համար փակել ճանապարհը: Նստում են իրենց պալատներում, գլուխները դուրս չեն հանում, Երեւանում նույնպես պալատներ են առնում ու իրենք իրենցով գոհ ու երջանիկ իրար հետ շփվում: Ասում էին` ոչ մի նորմալ գործ չկա շինարարության բանվորից բացի, դիպլոմներով գնան բանվորություն անե՞ն, իսկ մյուս, «պրիստիժնի» գործերում ոչ մի պատահական մարդ չեն վերցնում: 60-70 հազար դրամով հայրենիքում բանվորություն անե՞լ. էնա` կմեկնեն Ռուսաստան, այնտեղ այդ նույն բանվորությունը մեծ գումարներով կանեն: Եվ մեկնում են, արցախցիք, հատկապես սիրում են Մոսկվա մեկնել, իսկ ձմռանն այնտեղ աշխատած մի երիտասարդ նշեց, թե վեց հարյուրից ավելի ստեփանակերտցի երիտասարդ մարդիկ Մոսկվայում մի թաղամասում են ապրում` համարյա նույն ժամանակի մեջ են մեկնել եւ մի թաղում ապրելով իրենց պաշտպանված են զգում: Երիտասարդների այս խմբին զայրացնում էր, որ բարձր պաշտոնյաները խուսափում են երիտասարդների հետ հանդիպելուց, նրանց պրոբլեմների մասին լսելուց, ու գոնե դրանց մի չնչին մասին լուծում տալուց. «Իրենց համար նստում են փակ սենյակներում, հայրենասիրական ճառեր գրում ու տարածում», նկատում էին նրանք. կարծիքները կարող ենք անուններով մեջբերել, բայց մեզ անկեղծորեն իրենց կարծիքները փոխանցած երիտասարդները խուսափում էին լուսանկարվելուց եւ ներկայանալուց, ակնարկելով, որ այս փոքր քաղաքում դա անվտանգ չէ: Նրանք ասում էին, որ անցել է այն մտայնության ժամանակը, երբ ամեն առիթով քննադատողներին հայրենիք չսիրող էին հանում, իսկ չքննադատողներին եւ քծնողներին` հայրենասեր: Ժամանակն է պրոբլեմների իրական պատճառների մասին խոսելու, թայֆայական մոտեցումներից հրաժարվելու եւ շնորհալի մարդկանց ու հատկապես երիտասարդության ճանապարհը չփակելու:

Արցախի կառավարության, Ազգային ժողովի միջակայքի տարածքը, որ ցերեկով օրենսդիր ու գործադիր մարմինների տիրույթն է, երեկոյան «գրավում են» ստեփանակերտցիները` մինչեւ գիշերվա մեկ-երկուսը զբոսնելով այդ տարածքում, հարակից այգում, եւ գունավոր շատրվանների մոտ երաժշտություն լսելով: Հենց այնտեղ էլ ուշ երեկոյան զրուցեցինք բազմաթիվ մարդկանց հետ: Այս այգում դեռ իշխում է Ստեփան Շահումյանի արձանը, որը չի խանգարում այգու եւ նրա հարակից տարածքների գեղեցկությանը, իսկ ստեփանակերտցիք մութն ընկնելուց հետո են այդ գեղեցկությունն ըմբոշխնում: Այս կարգի զբոսանքներ ուշ ժամերին հայկական ուրիշ ոչ մի քաղաքում չենք տեսել. խաղաղ, առանց պատահարների ու վեճի, ապահով ու օրինակելի` ուրիշ քաղաքների համար:

Չնայած թափով կառուցվող նոր շենքերին, որոնք գուցեեւ առանձին գեղեցիկ են, սակայն Ստեփանակերտին նետված մի հայացքն էլ հերիք է, որ մարդ հասկանա` այս քաղաքում միասնական ճարտարապետական մոտեցումների հետքն անգամ չկա, Արցախի մայրաքաղաքի կերպար դեռեւս այստեղ չի երեւում: Ամեն հարուստ ոնց ուզում, որտեղ ուզում եւ ինչ «գյոռա» պալատ ուզում` սարքում է, փողին մուննաթ: Երեւի այգուն մոտիկ տարածքում Base Metals ոսկի արդյունահանող ընկերության` անտիկ պալատի շքեղությունն է վարակիչ եղել, որ դրան մոտիկ, հրապարակում Ազատամարտիկների միության շենքն էլ կամարային շքեղությամբ է կառուցվում, իսկ քիչ այն կողմ կարծես Հյուսիսային պողոտայի անկյունավոր շենքերից մեկը դրած-փոխադրած լինեն: Ամեն կողմից, այդ թվում եվրոպաներից վերցրած ոճերի խառնուրդները Ստեփանակերտը կարող են դարձնել շենքերի մի խայտաբղետ (վատ իմաստով) տոնավաճառ:

Ստեփանակերտում սեպտեմբերի 18-ին քաղաքապետի ընտրություններ են: Երեք թեկնածու կա. նրանց նկարները փակցված են ամեն պատի: Մարդիկ նայում ու դատողություններ են անում նրանց ընտրվելու շանսերի մասին. «Ում նշանակեն, նա էլ կընտրվի», բառախաղ է անում մի հնարամիտ տարեց` ակնհայտորեն ակնարկելով Արցախի կառավարության քարտուղար-նախարար Սուրեն Գրիգորյանին, որ երեք թեկնածուներից մեկն է: «Չէ, Էդուարդ Աղաբեկյանը կանցնի` սաղ բանակը թիկունքին», նրա հետ վիճում է մեկ ուրիշը` նկատի ունենալով, որ այս թեկնածուն բանակային բժշկական ծառայություններից մեկն է ղեկավարել: Երկուսը միասին, սակայն, համոզված են, որ երրորդ թեկնածուն` իրավաբան Մարտուն Հասրաթյանը դեռ երիտասարդ է, բայց ի՞նչ իմանաս:

*ՀԱՆԴԻՊՈՒՄ*

## ԱՄՆ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունեց Ֆիլիպ Լեֆորին

ԱՄՆ քարտուղար **Արթուր Բաղդասարյանն** ընդունել է Հարավային Կովկասի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ **Ֆիլիպ Լեֆորին**, որը նախկինում զբաղեցնում էր Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության` մայրցամաքային Եվրոպայի հարցերով վարչության պետի պաշտոնը: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան **Ռաուլ դե Լյուցենբերգերը**:

Շնորհավորելով հյուրին նոր պաշտոնը ստանձնելու կապակցությամբ` Արթուր Բաղդասարյանը մաղթել է հետագա արդյունավետ աշխատանք եւ նորանոր հաջողություններ:

Պարոն Լեֆորը նշել է, որ Եվրոմիությունում երկար քննարկումներից հետո որոշվել է որոշակի փոփոխություններով վերաբացել մանդատը` ներառելով հակամարտությունների կարգավորմանը եւ տարածաշրջանային զարգացմանը վերաբերող հարցերի շրջանակ:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել միջազգային իրադրության, տարածաշրջանային խնդիրների եւ մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ:

Արթուր Բաղդասարյանն ընդգծել է, որ բացառապես խաղաղ բանակցությունների եւ փոխընդունելի փոխզիջումների միջոցով հակամարտության կարգավորման Հայաստանի Հանրապետության հստակ եւ անփոփոխ դիրքորոշումը մշտապես հնչեցվել է տարբեր միջազգային հարթակներում: Այնուամենայնիվ, մեր հարեւան երկրի գործելաոճն այս հարցում բնութագրվում է անսկզբունքայնությամբ եւ մերթընդմերթ ուղեկցվում նույնիսկ միջազգային հանրության համար էլ արդեն սովորական դարձած ռազմատենչ հայտարարություններով, ինչը լուրջ խոչընդոտ է հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացի արդյունավետ իրականացման համար:

Պարոն Լեֆորը փաստել է, որ հիմնախնդրի լուծման միակ ընդունելի տարբերակը խաղաղ ճանապարհն է եւ անընդունելի է համարել ռազմական ճանապարհով խնդրի լուծման յուրաքանչյուր փորձ:

Արթուր Բաղդասարյանը նշել է, որ Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից վարվող քաղաքականության հետեւանքով Հայաստանը դուրս է մնացել մի շարք ոլորտներում, այդ թվում` էներգետիկայի եւ հեռահաղորդակցության ոլորտներում իրականացվող տարածաշրջանային ծրագրերից: Այս իրողությունը համահունչ չէ սերմանվող արժեքների` համերաշխության եւ փոխգործակցության վրա հիմնված եվրոպական ինտեգրացիայի գործընթացին:

ԱՄՆ քարտուղարը հավելել է, որ այնուհանդերձ Հայաստանը բաց է եւ պատրաստակամ իր հարեւանների հետ հարաբերություններում եւ որդեգրել է կառուցողական դիրքորոշում:

## Սեւակ Արծրունու պատասխանը

***Ստացել ենք Սեւակ Արծրունու պատասխանը օրերս իր հասցեին Նարեկ Հարությունյանի մամլո ասուլիսում արած մեղադրանքներին: Ծավալային մտահոգություններով` Արծրունու պատասխանը ներկայացնում ենք ամփոփ:***

Սեպտեմբերի 7-ին «Նարեկացի» արվեստի միության 7-ամյակին Նարեկ Հարությունյանը հայտարարություններ է արել, ինձ` Սեւակ Արծրունուս անհիմն ու անհեթեթ մեղադրանքներ ներկայացնելով: Ի պատասխան այդ զրպարտության` անհրաժեշտ եմ համարում հանրությանը ներկայացնել առկա իրողությունները: 2010 թ. սեպտեմբերից Հարությունյան ընտանիքի ձեռնարկատիրական եւ հասարակական գործունեությունը Հայաստանում անմիջականորեն ղեկավարում է Նարեկ Հարությունյանը: 2003 թ. սկսած մոտ 8 տարի Հարությունյան ընտանիքի բոլոր ծրագրերը Հայաստանում համակարգել եմ ես: Հակառակ այդ 8 տարիների նվիրված գործունեության` Ն. Հարությունյանի վիրավորական վերաբերմունքի պատճառով 2010 թ. սեպտեմբերին հրաժարական եմ ներկայացրել` պահանջելով Հարությունյաններից կատարել պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները: Դրանից խուսափելու նպատակով 2010 թ. դեկտեմբերին Հարությունյան ընտանիքը իմ դեմ հայցով դիմեց դատարան` պահանջելով վերադարձնել իբր իմ կողմից «յուրացված» ինչ-որ գումարներ: Գրոհի դեմ պաշտպանվելու համար հանդես եկա հայցով` պահանջելով պայմանագրով ինձ հասանելիք գումարը: Հարությունյանները տարբեր պատճառաբանություններով անդադար ձգձգում են դատավարությունը: Իրավապահ մարմիններին Ն. Հարությունյանի ներկայացրած բոլոր բողոքներն անհիմն են ու սուտ: Հարությունյանների ընտանիքի ձեռնարկատիրական գործունեությունում իմ համակարգած ժամանակահատվածում չի եղել ոչ մի լումայի տնտեսական չարաշահում:

## Յունիբանկը իրավաբանական եւ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալով ՀՀ բանկային համակարգի առաջատարն է

2011թ.-ի առաջին կիսամյակի արդյունքներով Յունիբանկը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների ծավալներով ՀՀ բանկային համակարգում զբաղեցնում է առաջատարի դիրքը: Բանկի իրավաբանական եւ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալները հաշվետու ժամանակահատվածում կազմել են, համապատասխանաբար, 32.9 մլրդ եւ 47.4 մլրդ դրամ: Յունիբանկի ժամկետային ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 28%-ով, իսկ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալը` 18%-ով: Յունիբանկն առաջատարի դիրքում է նաեւ ընդհանուր պարտավորություններում ժամկետային ավանդների ծավալով` 83,2%. Յունիբանկի ֆիզիկական անձանց ժամկետային եւ ցպահանջ ավանդների ծավալը 2011թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 51.5 մլրդ դրամ:

Յունիբանկը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առաջարկում է ինչպես ստանդարտ, այնպես էլ անվանական ավանդներ, որոնք ապահովության եւ եկամտաբերության գրավիչ համադրության շնորհիվ հնարավորություն են ընձեռում ավանդատուներին ընտրելու միջոցների խնայողության եւ բազմապատկման արդյունավետ տարբերակ: Այսօր Յունիբանկը, հաճախորդների պահանջներին ընդառաջ գնալով, առաջարկում է բարձր եկամտաբերությամբ` մինչեւ 12.1% տարեկան տոկոսադրույքով ավանդատեսակների լայն տեսականի:

# Նավթի եւ գազի գործոն

*Լուրջ թե լրջագույն համարվող թեմային
ներքոհիշյալ կերպ անդրադառնալու գնահատականը ընթերցողին ենք թողնում*

Օր չի լինի, որ հանրապետության տպագիր ու էլեկտրոնային մամուլով հանդես եկող հայրենի տնտեսական ու քաղաքական գործիչները չնշեն, որ ՀՀ ընդերքում նավթ ու գազ չունենալը որոշակի դժվարություններ է հարուցում մեր երկրի տնտեսական կայացման առումով: Այսօրինակ դիրքորոշումը փորձում են օգտագործել ազերիները՝ պարբերաբար հայտարարելով, թե սեփական նավթն ու գազը իրենց զգալի առավելություններ է տալիս տնտեսական ասպարեզում, իրենք հզորանում են եւ ի զորու են խաղաղից այլ միջոցներով լուծել արցախյան խնդիրը: Նման պահերին մեզ մոտ կարծես ինչ-որ անսովոր զգացում է առաջանում, ընկճվածության երեւույթ է նկատվում: Այ եթե... ենք ասում, մեր ունեցածի անլիարժեքությունը փաստում ու նման բաներ: Իսկ չարժե՞ արդյոք այդ պահին հիշել «սատանան այնքան էլ սարսափելի չէ, որքան թվում է» խոսքը: Ի վերջո Երկիր մոլորակի վրա քիչ չեն պետությունները, ուր նավթ ու գազ չկան, բայց մարդիկ մեզնից առավել աննպաստ բնակլիմայական պայմաններում ապրելով, մեզնից բարվոք կենցաղ ունեն: Մի օր մենք էլ կունենանք:

Որ երկրների ունեցած նավթագազային գործոնները ինչ-որ նշանակություն ունեն, մասամբ կարելի է ընդունել: Բայց որ դրանք այնպիսիք են, որոնք հոխորտալու ու սպառնալիքներով հանդես գալու իրավունք են տալիս, դա բանի նման չէ: Նշեմ շարքային քաղաքացուս դիտարկումները՝ թե ինչու: Աշխարհի հեռուստաալիքները ամեն օր են հեռարձակում, ասենք, Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսի հակահյուսիսամերիկյան հայտարարությունները, ԱՄՆ-ին մեղադրում աշխարհում եղած բոլոր չարիքների մեջ: Թվում է՝ տարիներ շարունակվող այս գործընթացը մի օր գործնական դրսեւորում կունենա, եւ Վենեսուելան կդադարեցնի իր հզորության ապացույց նավթի արտահանումը ԱՄՆ: Բայց արդեն 12-րդ տարին երկիրը միանձնյա ղեկավարող Ուգոն նման քայլ չի ձեռնարկում: Խոսքը, ոչ ավել, ոչ պակաս, 2009-ի յուրաքանչյուր օրը մոտ 1 մլն բարել նավթի արտահանման մասին է, ԱՄՆ-ի 9 մլն բարել ներկրման պարագայում: Ի՞նչ է անելու նավթի պաշարներով աշխարհում 5-րդ տեղում գտնվող Վենեսուելան առանց նավթային օրական 100 մլն դոլար ներհոսքի: Մի պարզ թվաբանական գործողություն կատարենք, որի տվյալները վերցրել ենք ԱՄՆ-ում 1868 թ.-ից լույս տեսնող «Համաշխարհային փաստեր. 2011» տեղեկատուից: Արդեն հիշատակված տարում Վենեսուելայի ողջ արտահանումը կազմել է 57,6 մլրդ դոլար, որից նավթի բաժինը միայն ԱՄՆ մոտ 40 մլրդ դոլար է: Ի զորու՞ է արդյոք 27 մլն բնակչություն ունեցող այս երկրի ղեկավարը այսօրվա վիճակով պահել իր մարդկանց, եթե մի օր ԱՄՆ-ում քաղաքական որոշում ընդունվի դադարեցնել իրենց չարիքի աղբյուր համարող երկրից նավթի ներկրումը: Նման նշաններ անշուշտ կան. երբ 1999-ին Չավեսը իշխանության եկավ, ԱՄՆ օրական նավթի արտահանումը 1,2 մլն բարել էր, 2009-ին կազմել է 950 հզ. բարել: Այս վիճակը կարծես ազդում է վենեսուելացիների կենցաղի վրա, ովքեր առավել արմատական տրամադրություններ են ցուցաբերում նախագահի քաղաքականության հանդեպ: Տնտեսությունից շատ բան չհասկացող ամեն ոք կփաստի, որ առավել գերադասելի է ունենալ ԱՄՆ-ի տնտեսությունը, քան վենեսուելական նավթը:

Ի՞նչ պատկեր է ուրվագծվում Ադրբեջանի պարագայում: Ըստ հիշատակված տեղեկատուի՝ այս երկրի նավթային պաշարները հաշվվում են 7 մլրդ բարել, որը աշխարհում 19-րդ ցուցանիշն է, 30 մլրդ խմ գազի պաշարով 28-րդը: Նավթի ու գազի որոշակի ծավալներ արտահանվում են, ասենք, Իսրայել, ուր այս էներգակիրները չկան: Ծանոթանանք այս երկրների որոշ վիճակագրական թվերի: Ադրբեջանի ողջ արտահանումը, որտեղ հիմնականը նավթն ու գազն են, արդեն հիշատակված տարում կազմել է 13,2 մլրդ դոլար, բնակչության նույն քանակն ունեցող Իսրայելինը՝ 46 մլրդ դոլար: Յուրաքանչյուր ադրբեջանաբնակի բաժին հասնող ՀՆԱ-ի արդյունքով Իսրայելում այս ցուցանիշը եռապատիկ ավելին է, եւ սա՝ 3,5 անգամ խիտ բնակեցված լինելու պայմաններում: Օրերս մի փոքր շփոթմունք-զարմանք ապրեցի, երբ մոսկվայաբնակ ծանոթս ասաց, որ իրենք տարվա մի զգալի մասը իսրայելական բանջարեղենից են օգտվում, երբ խնդրեցի կոնկրետանալ, հիշեց ստեպղինը, որը մենք նաեւ գազար ենք կոչում: Ահա այսպիսի բաներ, ոչ իմիջիայլոց:

Ինչ-որ հատուկ բան ապացուցելու նպատակ չեմ հետապնդում, այլ ընդամենը ցանկանում եմ նշել մեզանում հաճախ հիշատակվող նավթի ու գազի փաստարկման գործոնի, մեղմ ասած, ոչ լիարժեքությունը: Անգոլան 9 մլրդ բարել նավթային պաշարներով 17-րդ երկիրն է, Նիգերիան՝ 36 մլրդ բարելով՝ 11-րդը: Անգամ նվազագույն գիտելիքներ ունեցող որեւէ մեկը չի փորձի այս երկրների հզորությունների վերաբերյալ որեւէ նպաստավոր խոսք ասել: Անգամ Սաուդյան Արաբիան, ուր նավթի պաշարները 267 մլրդ բարել են հաշվվում, աշխարհում 1-ին ցուցանիշը, էապես զիջում է ԱՄՆ-ում բարեկեցության աստիճանին: Ավելորդ չհամարենք հիշել, որ արաբական այս երկիրը 2003 թ. յուրաքանչյուր օր ԱՄՆ արտահանում էր 1,7 մլն բարել նավթ, 2009-ին՝ 980 հզ. բարել:

Թե ինչով է պայմանավորված նավթառատ հիշատակված երկրների դեպի ԱՄՆ արտահանումների նվազումը, դժվար չէ գուշակել: Չգիտեմ՝ ինչքանով կհամաձայնեն տողերիս հեղինակի մոտեցմանն այն է, որ հզոր երկրները օրեօր փորձում են ազատվել այլոց էներգետիկ կախվածությունից: Ոմանք ընտրում են արեւի էներգիան, մյուսները՝ քամու ուժը, երրորդները ջուրն են տրոհում, արդեն իսկ զգալի տարածում ունեն կենսագազն ու կենսաէլեկտրականությունը, որոնք նավթի ու գազի պաշարների կողքին ուղղակի անսպառ են: Ճապոնացիներն ու գերմանացիները փակում են 100-միլիարդավոր կվտ. ժամեր էլեկտրականություն տվող ատոմակայանները, որը հնարավոր չէ իրականացնել նավթի ու գազի օգնությամբ: Ուրեմն կա այլընտրանք: Բրազիլացիներն իրենց ավտոպարկի զգալի մասը կենսավառելիքով են շահագործում, եվրոպացիները՝ մասամբ. դարձյալ այլ տարբերակ է: Վստահ լինենք, որ հայերս էլ այս գործընթացներում հետ չենք մնում, քանզի ինչ-ինչ աշխատանքներ մեզանում իրականացվել եւ իրականացվում են:

Ավաղ, մեր հարեւան ազերիները իրենց այսօրեական պահվածքում լրջմիտ վերաբերմունք չեն ցուցաբերում, շատ հարցեր փորձում են լուծել «առ եւ տուր»-ի սկզբունքով. տվեք սա, տանք սա: Մոռանում են, որ այսօրվա իրենց շահառուները տեսանելի տարիներ անց կորցնելու են գործընկերոջ հանդեպ իրենց հետաքրքրությունը: Անշուշտ հեռանալու են, կրկին ու դարձյալ նրանց ականջներին հնչեցնելով հարեւանիդ հետ կերուխում արա, առեւտուր մի արա խոսքերը:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

# Մոգական կայքէջը

*1-ին էջից*

Որ վիզա ստանալու համար կարելի է իմացած-չիմացածը պատմել, լրիվ հնարավոր է: Իսկ որ հայ գործիչները հավատան, թե ամերիկյան ուժերը Հայաստան էլ ժողովրդավարություն կբերեն, բնավ էլ հավատալու չէ, լրիվ անհնարինի ոլորտից է, քանի որ այդ արժեքները նախ պետք է կրել, որ հետո էլ որեւէ երկրի աջակցությունը դրանում ստանալու հույսեր փայփայես:

Ուրեմն մնում է այն տարբերակը, որի դեպքում հայ գործիչներն ամերիկյան դեսպանատանը շատախոսում են՝ ելնելով սեփական մանր-մունր ցանկությունների կատարումը երաշխավորելու մտադրությունից: Ինչպես ժամանակին հայ նախարարներն էին շատախոսում Պարսկաստանի կամ Բյուզանդիայի արքունիքներում: Ամեն դեպքում, ամերիկյան դիվանագետների հետ բավականին բացախոս ու որոշ դեպքերում էլ անտրամաբանական, չհիմնավորված կարծիք հայտնող գործիչները պետք է հասկանան, որ հզորներից հզորություն չեն աղերսում:

## Մեր ջոկջկած WikiLeaks-ը

Սկանդալային սայթի «սկանդալային» բացահայտումները, ընդհանուր առմամբ, առանձնակի անսպասելի ու չիմացված երեւույթների մասին չեն, թեեւ երբեմն ինչ-որ նոր բաներ ասում են: Ուստի մոգական ուժով օժտել այն ամենը, ինչ համացանցային իրականություն է լցվում WikiLeaks-ից, ուղղակի ծիծաղելի է: Իրապես բավականին հետաքրքրական տեղեկություններ կան ամերիկյան դիվանագիտական հաղորդագրություններում, հատկապես երբ ներկայացվում են ոչ թե ամերիկացի դիվանագետների կարծիքներն ու դատողությունները, այլ տարբեր մարդկանց տեղեկությունները:

Պարզվում է, այս հարցում էլ այնպիսի ընտրողականությամբ ենք մոտենում WikiLeaks կոչվածին, որ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աշխատակիցներին իրենց կյանքը պատմող մեր գործիչները լրիվ սազական են դառնում ինչպես մեզ, այնպես էլ հասարակությանը: Խոսքը տարբեր լրատվամիջոցների շատ ընտրովի, կասեի՝ ջոկջկած տեղեկությունների տրամադրումն է, ավելի ճիշտ՝ սկանդալային կայքէջից այնպիսի հրապարակումների վերահրապարակումը, որոնք բավարարում են մեր ԶԼՄ-ների դիրքորոշումների «ճշմարտացիությունը» հիմնավորելու պահանջը:

Որոշ լրատվամիջոցներ, օրինակ, ուղղակի չեն դադարում հայ ընդդիմադիրներին ամերիկյան դիվանագետների տված գնահատականներն ու պիտակները ներկայացնելուց, խորհուրդներն էլ հետը: Ասենք, ԱՄՆ-ի արդեն նախկին դեսպան Մարի Յովանովիչը մինչեւ Հայաստանից հեռանալը հանդիպել է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին ու խստագույնս «առաջարկել» չմանեւրել հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման թեմայով: Իսկ այն, որ ըստ ամերիկացի պաշտոնյաների, ԼՏՊ-ին երբեք էլ հասարակության լայն զանգվածները չեն սատարել, կամ Հայ ազգային կոնգրեսը նախագահական ընտրություններից հետո 2008-ին քաղաքական մահ էր ապրում՝ կորցնելով կողմնակիցներին, առանձնակի նոր բան չի ասում:

Մեկ այլ խմբի դարդուցավն էլ ճիշտ հակառակն է՝ ԼՏՊ-ին ներկայացնել լավագույնս ու սեւացնել իշխանություններին: Թե ինչպես կարելի է դրական ընկալել այն հանգամանքը, որ, ըստ նույն այդ WikiLeaks-յան հաղորդագրությունների, ԼՏՊ-ն 2008-ի նախագահական ընտրություններից մի քանի օր անց ամերիկյան դեսպանատանն է դիմել «ճնշում գործադրելու» Հայաստանի իշխանությունների վրա, դժվար է բացատրել, բայց որ ԼՏՊ-ի ստացած ձայները «հաշվում ու հրապարակում է» ԱՄՆ գործերի հավատարմատար Ջոզեֆ Փենինգտոնը, այնքան էլ լուրջ չէ:

Քոչարյան-Սարգսյան հարաբերությունների մասին հրապարակումներում էլ սկանդալային կայքէջի հաղորդագրություններն այնպես են մատուցվում, կարծես դրանց մի մասը գրել է Սերժ Սարգսյանը, մնացյալը՝ Ռոբերտ Քոչարյանը: Ինչ վերաբերում է օլիգարխներին ու նրանց «շնորհիվ» Հայաստանում ստեղծված իրավիճակին, ապա, ինչպես ասում են, իբր մեր իմացածը շատ էինք կարողանում մարսել, դեռ կայքէջային բացահայտումներն էլ նորանոր մտահոգություններ են ավելացնում:

Թեեւ, ի պատիվ մեր որոշ գործիչների, պետք է նշել, որ նրանք իրենց հարաբերություններում ու շփումներում բացբերան կնոջ վարքագիծ չեն դրսեւորել, բայց WikiLeaks-ի հաղորդագրությունները ղարաբաղյան թեմաներով որքան հետաքրքրական, նույնքան էլ վտանգավոր են մեկ բացառությամբ, որ բոլոր հաղորդագրությունների բովանդակությունն այս հարցում կարող է շատ փոքր առնչություն ունենալ ներկա գործընթացներին ու իրավիճակին, նաեւ մոտեցումներին: Ամեն դեպքում, հինգ շրջան հանձնելու պատրաստակամության կամ ընդհանրապես ոչ մի թիզ հող չզիջելու մոտեցումների վերագրումը նույն նախագահներին կամ գործիչներին տարբեր անձանց կողմից եւս մեկ ապացույց է, որ սրա-նրա խոսքերի ու սեփական դիտարկումների հիման վրա ամերիկյան դիվանագետների արած եզրակացությունները բնավ էլ վերջին ատյանի ճշմարտություն չեն ու այդպիսին չպետք է ընդունվեն:

## Շատ թույլ մխիթարանք. հարեւանները մեզանից բերանբաց են

Վրաստանում Ջուլիան Ասանժի հեղինակած կայքէջի հրապարակումների համաձայն, ամերիկյան դիվանագետների հետ պարբերաբար հանդիպում ու ամեն ինչ պատմում են գրեթե բոլորը: Այս երկրում ամերիկյան դեսպանությունը թերեւս ընկալվում է մի տեղ, ուր մարդիկ գնում են խոստովանության, ասում են ամեն ինչ, հարցնում ու խորհուրդներ ստանում: Իսկ Ադրբեջանում բացախոսության բոլոր ռեկորդները հաղթահարված են, ոչ ավել, ոչ պակաս, հենց երկրի նախագահ Ալիեւ կրտսերի կողմից: Ի դեպ, սա էլ մեր որոշ լրատվամիջոցների «սիրելի» թեմաներից է, այսինքն՝ ցույց տալը, թե ինչից ու որքան, նաեւ ում է դժգոհում Ալիեւ կրտսերը:

Այն, ինչ ամերիկացի դիվանագետներն իրենց հաղորդագրություններում գրում ու, ինչն ավելի վատ է, մտածում են Իլհամ Ալիեւի մասին, պետք է լուրջ քննարկումների ու խորհրդակցությունների տեղիք տա հենց մեզանում: Ալիեւը ներկայացվում է որպես նեղմիտ, հավակնոտ, հույսերով, թե նավթային պաշարներով «զինված» Ադրբեջանը կարող է Ռուսաստանից աջակցություն ստանալ պատերազմ վերսկսելու դեպքում: Իսկ Ադրբեջանում քարոզչությամբ թշնամանք սերմանող այս քաղաքական գործչի՝ ամեն հարցով ԱՄՆ դեսպանի դուռը գնալու ու գանգատվելու արեւելյան սովորությունը միայն շեշտադրում է, որ առավել անկայուն իրավիճակ ցարդ չի ստեղծել ոչ մի ադրբեջանցի ղեկավար:

Ամեն դեպքում, նույն այդ հաղորդագրությունների համաձայն, ուժային ճանապարհով ղարաբաղյան հարցը լուծելու սեփական կարողություններին անվստահ Ալիեւը վերջին շրջանում իսկապես դեմարշներով է արձագանքում ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկներին ու գործողություններին, այնպես էլ ամերիկյան ու այլ երկրների քննադատությանը:

Եվ եթե այս ամենին էլ գումարենք վրացական կառավարությունից ամերիկյան «չգոհությունը», ինչպես նաեւ կոռուպցիոն խորացումների ադրբեջանական իրականության մասին հաղորդագրությունները, մի քիչ մխիթարանք կարելի է գտնել, բայց դա բնավ էլ չի նշանակում, թե հայաստանյան իրականությունը բավարարում է որեւէ նորմալ ու ընդունելի պահանջ:

## Ի՞նչ եւ ինչո՞ւ են հերքում

Հայաստանում էլ, հարեւան երկրներում էլ գտնվում են մարդիկ, պաշտոնյաներ, որ հերքում են որոշ տեղեկություններ կամ, որ ավելի վատ է, դատողություններ, որոնք հրապարակվում են WikiLeaks-ում: Հասկանալի է, որ շատ դեպքերում ամերիկացի դիվանագետների հետ զրույցները չեն ձայնագրվել, ասել է թե չկան այս կամ այն գործչի արած հայտարարությունների վկայություններ ու ապացույցներ, սակայն, անկեղծ լինենք, մենք հո գիտենք, թե մեր պատվելի այրերից ովքեր ինչ բացախոսության են ընդունակ, այն էլ ամերիկյան քաղաքացիություն ու մի փոքր էլ ազդեցություն ունեցող անձանց առաջ սիրտ բացելու առումով:

Դրա փոխարեն շատ ավելի կարեւոր, անգամ հրամայական է մտածելը, թե ինչն է դրդում հայ գործիչներին այդքան շատախոս գտնվել եւ ամերիկյան դեսպաններին ու հավատարմատարներին ներկայացնել անգամ դեռեւս քննարկվող հարցերը: 2003-ին էր, երբ Հայաստանի դատարանների այդպես էլ չփոխված որոշմամբ 10 տարվա ազատազրկման դատապարտվեց արեւելագետ, լրագրող, Հայաստանի առաջին նախագահի նախկին խորհրդական Մուրադ Բոջոլյանը՝ դառնալով անկախ Հայաստանի առաջին քաղաքացին, որ դատապարտվեց հայրենիքի դավաճանության մեղադրանքով՝ հօգուտ Թուրքիայի: Այն ժամանակ հիմնական մեկնաբանությունն այն էր, որ թեեւ Բոջոլյանի փոխանցած նյութերը թուրք լրագրողներին, որոնք իբր լրտես էին, պետական գաղտնիք չեն պարունակել, բայց միայն փոխանցումը օտարերկրյա հատուկ ծառայություններին բավարար է, որ դատապարտեն մարդուն:

Իսկ արդյո՞ք ամերիկյան դեսպանատներում հատուկ ծառայությունների աշխատակիցներ չեն լինում....

# «Կարեւորութիւնը մեր միասնականութիւնն է հաւաքական դժուարութիւններու դիմաց»

## *Հարցազրոյց Մոնրէալի քաղաքապետական խորհուրդի նախագահ Յարութ Չիթիլեանի հետ*

***Մոնրէալի տարեկան համաժողովրդական 2011 Օգոստոս 12,13,14-ին տեղի ունեցած եռօրեայ մեծ փառատօն-քերմեսին, որուն կը մասնակցէին հազարաւոր հանդիսականներ, առիթը ունեցայ հանդիպում ունենալու Մոնրէալի քաղաքապետական խորհուրդի երիտասարդ նախագահ Յարութ Չիթիլեանի հետ: Ընդունեց առաջարկս ունենալու հարցազրոյց, զոր համառոտելով կը ներկայացնեմ:***

**- Պր. Չիթիլեան, կրնա՞ք ներկայացնել ձեր երիտասարդ կեանքի յաջողութեան պատմութիւնը:**

- Ծնած եմ Պէյրութ, Լիբանան, եւ շատ երիտասարդ տարիքիս փոխադրուած Մոնրէալ, երկիր մը՝ որ բաժան-բաժան էր եղած համայնքային ընդհարումներու հետեւանքով: Ինծի համար անմիջական անակնկալը եղած է յարաբերական խաղաղութիւնը որդեգրած քաղաքիս, ուր բազմաթիւ բնակիչներ, այլազան էթնիքական ծագումով, միասին կապրին: Աւարտեցի երկրորդական ուսումս Մոնրէալի հարաւակողմը, ֆրանսերէն լեզուով ուսուցանող վարժարանի մը մէջ, միեւնոյն ժամանակ մասնակցելով Մոնրէալ քաղաքի մարզական ծրագիրներուն՝ ինչպիսին էին լողորդութիւնը, ջուրի փոլոն եւ պասքեթպոլը: Շարունակեցի համալսարանական ուսումը, աւարտելով որպէս համակարգիչներու ճարտարագէտ, ապա մասնագիտանալով հեռահաղորդումներու (telecommunication) մարզին մէջ Մոնրէալի Փոլիթեքնիք երկրաչափական կաճառէն:

**- Որպէս նախագահ աշխարհի մեծ քաղաքներէն մէկուն քաղաքապետական խորհուրդին, կրնա՞ք գաղափար մը տալ ձեր պարտականութիւններուն եւ ծրագիրներուն մասին:**

- Ընտրուեցայ յունիս 20, 2011 ին, երբ 30 տարեկան էի: Որպէս նախագահ բազմաթիւ պարտականութիւններ ունիմ: Քաղաքային խորհուրդի նախագահին պաշտօնն է ըլլալ պահապանը քաղաքապետարանի ժողովրդավարական արժէքներուն: Հաշուետու ըլլալ քաղաքապետական խորհուրդին: Խորհուրդի նախագահին տրուած է շարք մը պատասխանատուութիւններ, նպատակ ունենալով զօրացնել քաղաքացիներու վստահութիւնը եւ անոնց մասնակցութիւնը հանրային կեանքին: Այս գրասենեակը յաճախ քաղաքացիներուն, հանրութեան եւ խորհրդականներուն համար առաջին հանդիպման կէտն է: Որպէս չէզոք եւ անկողմնակալ, խորհուրդի նախագահի պարտականութիւնն է պահպանել եւ առաջ տանիլ քաղաքապետարանի ժողովրդավարական գործընթացը: Քաղաքային խորհուրդի նախագահական գրասենեակը կապի միջոցը կը հանդիսանայ ընտրեալ պաշտօնատարներուն միջեւ եւ խորհրդատու քաղաքի բարոյագիտական (ethics) սկզբունքներուն եւ պատասխանատու՝ օգնելու եւ խորհուրդ տալու քաղաքի պաշտօնատարներուն որպէսզի կարենան գոհացնել քաղաքացիներուն կարիքները եւ կատարեն իրենց պարտականութիւնները: Խորհուրդի նախագահը կը վարէ քաղաքի խորհուրդի ժողովները, ինչպէս նաեւ կը գլխաւորէ քաղաքի խորհուրդի յանձնաժողովները: Քաղաքի խորհուրդի նախագահը նաեւ պատասխանատու է քաղաքապետարանին: Վերջապէս, քաղաքի խորհուրդի նախագահին յանձնախումբը կը վարէ քաղաքի ընդունելութիւնները եւ փրոթոքոլի գրասենեակը ինչպէս նաեւ քաղաքի խորհրդատու երեք մարմինները՝ Երիտասարդութեան խորհուրդը, Մոնրէալցիներու խորհուրդը եւ Միջմշակութային խորհուրդը:

**- Ապագայի համար ի՞նչ ծրագիրներ ունիք:**

- Չորս տարուան պաշտօնավարութեանս առաջին երկու տարիներուն մնացի հաւասարիմ ամբողջ կեանքիս ընթացքին իմ վարած սկզբունքներուս: Հիմնական սկզբունքներ, ինչպէս յարգանքը, հասկացողութիւնը, հաշուետուութիւնը: Որեւէ ընտրուած պաշտօնատար, առանց նկատի առնելու պաշտօնը, ընտրուած է ծառայելու իր ժողովուրդին:

Հետեւաբար մեր գլխաւոր առաքելութիւնը պիտի ըլլայ ծառայել քաղաքացիներուն: Պաշտօնավարութեանս մնացեալ երկու տարիներուն, ունիմ երկու աստիճանի ծրագիրներ: Առաջինը եւ կարեւորագոյնը, որպէս խորհրդատու մեծ թիւով խտացած եւ էթնիքականօրէն այլազան ընտրական շրջաններ ունեցող Մոնրէալ քաղաքի Պորտօ-Քառթիէվիլ շրջանը պիտի շարունակեմ անաչառօրէն եւ կանոնաւոր ընթացքով զարգացնել եւ գործադրել յստակ միջոցներ, որպէսզի բարձրանայ կեանքի մակարդակը եւ ապահովութիւնը հոն բնակող 45.000 քաղաքացիներուն:

Իմ գլխաւոր նպատակս պիտի ըլլայ ընկերակցիլ խորհրդականներուն, յառաջացնելով տեսանելի եւ մանրակրկիտ գործընթաց մը, միեւնոյն ժամանակ պահպանելով ժողովրդավարական սկզբունքները եւ մեր հաստատութիւններու արժէքները: Վերջապէս, պիտի շարունակեմ յառաջացնել մասնակցութիւնը երիտասարդութեան քաղաքացիական գործընթացին մէջ: Կը յուսամ շատեր, մանաւանդ մեր համայնքէն, պիտի հետեւին քայլերուս:

**- Հայաստան այցելա՞ծ էք եւ ինչ են ձեր տպաւորութիւնները:**

- Այո, երկու բացառիկ առիթներով: Արձանագրուած բառերը արդար պիտի չըլլան հանդէպ իմ զգացումներուս ուժգնութեան եւ խորքին, որ ապրեցայ այդ երկու առիթներով:

**- Ի՞նչ պատգամ ունիք Մոնրէալի հայ համայնքին:**

- Մենք մոնթրիալցիներս, հպարտ ենք մեր հայ ծագումով: Մենք սահուն կերպով կը խօսինք պաշտօնական երկու լեզուները: Լաւապէս շաղուած ենք տեղական գործերուն, կրթական, մշակութային եւ քաղաքական շրջանակներուն մէջ: Անցնող տարիներուն ընթացքին, Մոնրէալ միշտ արտօնած է մեզի պահպանել մեր հայկական ինքնութիւնը, լեզուն եւ ժառանգութիւնը: Մենք պէտք է շարունակենք մեր գնահատանքը հանդէպ մեր որդեգիր քաղաքին, իր բարեմասնութիւններով եւ իր թերութիւններով, մինչ մենք կը զարգացնենք հարստութիւնը մեր մշակութային ժառանգութեան եւ պատմական դասին:

**- Իսկ ընդհանրապէս հայութեա՞ն:**

- Կը նշմարեմ, որ հակառակ մեզ բաժնող հեռաւորութիւններուն, մեր Սփիւռքը, մեր Մայր հայրենիքը, մեր համայնքները միասնաբար միշտ պէտք է ըլլանք միացեալ մեր հաւաքական եւ անհատական յաղթանակներուն համար եւ պէտք է մնանք ամուր եւ միացեալ՝ դիմագրաւելու համար մեր հաւաքական դժուարութիւնները:

**ԿԱՐՊԻՍ Ն. ԳԱԶԱՆՃԵԱՆ**
**Մոնրէալ**

# Ահմադինեժադը սիրիացիներին երկխոսության կոչ արեց

**Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը Սիրիայի նախագահ Բաշար Ասադին հորդորել է դադարեցնել բողոքի ելույթների ճնշումը եւ բանակցություն սկսել ընդդիմության հետ: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Իրանի նախագահն իր առաջարկությունն արել է Պորտուգալիայի հեռուստատեսությանը տված հարցազրույցում:**

**Ահմադինեժադն ընդգծել է, որ «ռազմական լուծումը երբեք ճիշտ չի լինում», ուստի կողմերը «պարտավոր են խնդիրները լուծել երկխոսության միջոցով»: Նա խոստացել է համակողմանիորեն աջակցել Սիրիայի ղեկավարությանը, եթե վերջինս բռնի բարեփոխումների ուղին:**

**Ըստ Ահմադինեժադի, Սիրիայի կառավարությունը (ինչպես որ մյուս բոլոր կառավարությունները) պարտավոր է ճանաչել ժողովրդի «ազատության, արդարության եւ հարգանքի» իրավունքը:**

**Հիշեցնելով Լիբիայում ՆԱՏՕ-ի ձեռնարկած գործողությունը, Ահմադինեժադը օտար երկրներին նախազգուշացրել է, որ չմիջամտեն Սիրիայի «ներքին գործերին»:**

**ՌԻԱ գործակալությունը ընդգծում է, որ Ասադի վարչակարգի անկումը կարող է Մերձավոր Արեւելքում զգալիորեն թուլացնել Իրանի դիրքերը: «Եթե Ասադը եւ նրա շրջապատը, որոնք ալավիներ են (իսլամի ուղղություններից մեկի հետեւորդներ), Սիրիայում կորցնեն իշխանությունը, ապա իրանցիների հաղորդակցության հիմնական ուղին կանհետանա», այս կապակցությամբ հայտարարել է Ֆրանսիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի ղեկավար Թիերի դը Մոնբրիալը:**

# Քադդաֆի. «Ես Լիբիայում եմ»

**Լիբիական հեղափոխության առաջնորդ Մուամմար Քադդաֆին երեկ գիշեր տարածել է իր հերթական ձայնագրված ելույթը: Իր կողմնակիցներին հասցեագրված ելույթում նա հերքել է այն լուրերը, թե ինքը փախել է Լիբիայից եւ ապաստան գտել հարեւան Նիգերում:**

**Բացի դրանից, Մուամմար Քադդաֆին լիբիացիներին կոչ է արել զենք վերցնել եւ հայրենիքը պաշտպանել «ֆրանսիացիների եւ իտալացիների համար լրտեսություն անող դավաճաններից, առնետներից ու շներից»: Ելույթից հատվածներ մեջբերող քաթարյան «Ալ Ջազիրա» հեռուստաալիքն ավելացնում է, որ Քադդաֆին խոստանում է սաստկացնել «դիմադրությունը» եւ «վարձկանների վերջը տալ»:**

**Ավելի վաղ լիբիացի ապստամբները հայտարարել էին, թե իրենք իբր գտել են Քադդաֆիի գտնվելու վայրը եւ աստիճանաբար շրջապատում են նրա թաքստոցը:**

**Առայժմ Քադդաֆիի կողմնակիցների վերահսկողության տակ մնում է երեք քաղաք: Առաջինը Բանի-Վալիդն է, որի գրավման վերաբերյալ օրերս ապստամբների տարածած լուրերը, ինչպես պարզվեց, ապատեղեկատվություն են: Երեկվա տվյալներով, մի քանի հազար ապստամբներ հրամանի են սպասում Բանի-Վալիդը գրոհելու համար: Ենթադրվում է, որ այդ քաղաքում են Քադդաֆիի որդիներից երկուսը՝ Սաադին եւ Սեյֆ ալ Իսլամը: Մյուս երկու քաղաքներն են Սիրտը եւ Սաբհան:**

**BBC-ն հիշեցնում է, որ Հաագայի դատարանը կարգադրել է ձերբակալել Մուամմար Քադդաֆիին: Սակայն Աֆրիկյան միության պետությունները մտադիր են անտեսել միջազգային դատարանի այդ կարգադրությունը:**



# Եռօրյա սուգ «Յակ-42»-ի աղետից հետո

## *Հայտնաբերվել է «սեւ արկղերից» մեկը*



Յարոսլավլի մարզի նահանգապետ Սերգեյ Վախրուկովը տարածաշրջանում սեպտեմբերի 9-11-ը սգո օրեր է հայտարարել սեպտեմբերի 7-ին տեղի ունեցած ավիավթարի կապակցությամբ: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ Յարոսլավլ քաղաքի եւ մարզի իշխանությունները զոհվածներից յուրաքանչյուրի ընտանիքին կվճարեն 450 հազար ռուբլի, իսկ ավիաընկերությունը՝ 2 մլն ռուբլի:

Սեպտեմբերի 7-ին ժամը 16-ին Յարոսլավլի «Տունոշնա» օդանավակայանից թռչելուց քիչ անց Վոլգայի ափին ընկած «Յակ-42»-ը տանում էր «Լոկոմոտիվ» թիմի հոկեյիստներին: Ընկած օդանավի պոչը մնացել էր գետափին, մնացած մասը՝ գետում: Օդանավում կար 45 մարդ՝ անձնակազմի 8 անդամները եւ «Լոկոմոտիվի» 37 հոկեյիստներն ու մարզիչները: Ծանր վիրավոր վիճակում ողջ են մնացել միայն հոկեյիստ Ալեքսանդր Գալիմովը եւ ուղեկցորդ Ալեքսանդր Սիզովը:

Սեպտեմբերի 8-ին աղետի վայր այցելեց ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը:

Աղետի պատճառները ստույգ հայտնի չեն, բայց առկա է երկու հիմնական վարկած: Առաջինը շարժիչներից մեկի խափանումն է: Երկրորդը՝ օդաչուների սխալը, որոնք փորձել են ամեն գնով օդ բարձրանալ:

Օդանավի կործանման պատճառները քննող հանձնաժողովի անդամներից մեկը Ինտերֆաքս գործակալության թղթակցին հայտնել է, որ «Յակ-42»-ը դուրս էր եկել թռիչքադաշտից եւ մոտ 400 մետր սլացել խոտի վրայով: «Ի դեպ, սիզամարգի վրա մնացել են միայն հետեւի անիվների հետքերը: Դա վկայում է, որ օդաչուները փորձել են օդ բարձրացնել ինքնաթիռը», ասել է նա:

Տվյալ դեպքում օդաչուները պարտավոր էին շատ արգելակել, բայց նրանք մինչեւ վերջին պահը փորձել են օդ բարձրացնել մեքենան: Թե ինչու են այդպես վարվել, անհասկանալի է:

«Յակ-42»-ի անկման վայրում հայտնաբերվել է երկու «սեւ արկղերից» մեկը: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ դրանք գտնվում էին օդանավի պոչամասում, որն ի վերջո ընկել էր գետը: «Սեւ արկղը» գտել են ջրասուզակները:

Աղետի վայրում պայթուցիկ նյութի հետքեր չեն հայտնաբերվել: Անկման պատճառների քննությամբ զբաղվող հանձնաժողովում Ինտերֆաքսին հայտնել են, որ օդանավի անձնակազմը դիսպետչերներին չէր զեկուցել որեւէ անսարքության մասին: Ռադիոկապը ընդհատվել էր թռիչքի թույլտվություն ստանալուց անմիջապես հետո:

ՌԴ հոկեյի ֆեդերացիան մի քանի օրով հետաձգել է երկրի հոկեյի առաջնության խաղերի սկիզբը, որպեսզի հնարավոր լինի վերակազմել «Լոկոմոտիվ» թիմը: Հոկեյի մի շարք ակումբներ խոստացել են խաղացողներով համալրել «Լոկոմոտիվի» կազմը:

# Էհուդ Բարաք. «Թուրքիան մեր թշնամին չէ»

## *Հնարավոր է թուրք-եգիպտական ռազմական պայմանագիր*

Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը երեկ հայտարարել է, որ չնայած երկկողմ հարաբերությունների վատթարացմանը, Թուրքիան Իսրայելի թշնամին չէ: Այդ մասին հաղորդում է «Ջերուսալեմ փոստ» թերթի կայքէջը:

Նախարարի խոսքերով՝ Անկարայի հետ ներկայիս դիմակայությունը վաղ թե ուշ դադարելու է, իսկ երկկողմ կապերը կարգավորվելու են: Բարաքը չի պարզաբանել, թե տվյալ դեպքում ինչի վրա է հիմնված իր վստահությունը:

Իր ելույթում Բարաքը կրկին ափսոսանք է հայտնել 2010-ի մայիսին «Ազատության նավատորմիղի» 9 թուրք ակտիվիստների սպանության կապակցությամբ, սակայն կասկածի տակ չի առել ակտիվիստների դեմ ուժի գործադրման անհրաժեշտությունը եւ պաշտոնապես ներողություն չի խնդրել Թուրքիայից:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Իսրայելի դիրքորոշմանն ի պատասխան՝ Թուրքիան սառեցրել է նրա հետ բոլոր ռազմական շփումները, իջեցրել երկկողմ դիվանագիտական ներկայացուցչության մակարդակը, անօրինական հայտարարել Գազայի հատվածի իսրայելական շրջափակումը եւ խոստացել էր թուրքական ռազմանավեր ուղարկել Պաղեստինի ափերի մոտ:

Իսրայելում ափսոսանք են արտահայտում երկկողմ հարաբերությունների վատթարացման կապակցությամբ, բայց հրաժարվում են փոխել դիրքորոշումը եւ մասնավորապես ներողություն խնդրել Թուրքիայից:

Իսրայելական «Հաարեց» թերթին հայտնի է դարձել, որ Թուրքիան մտադիր է ռազմական համաձայնագիր ստորագրել Եգիպտոսի հետ: Սպասվում է, որ երկու երկրները համապատասխան պայմանագիր կստորագրեն սեպտեմբերի 12-ին՝ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի Կահիրե կատարելիք այցելության ժամանակ:

Թերթը նշում է, որ վերջին 15 տարում սա թուրք վարչապետի առաջին այցն է Եգիպտոս: Վերջինիս նախկին ղեկավար Հոսնի Մուբարաքը Թուրքիային Եգիպտոսի մրցակիցն էր համարում Մերձավոր Արեւելքում եւ արաբական երկրներում: «Հաարեցի» լրագրողների կարծիքով՝ Եգիպտոսի ներկայիս ղեկավարությունը պատրաստ է Թուրքիայի հետ զարգացնել տնտեսական եւ ռազմական հարաբերություններ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

# «Տեր կանգնենք սփյուռքահայ գրականությանը»



**Սեպտեմբերի 8-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողների համար «Ակնարկներ սփյուռքահայ գրականության» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ սփյուռքահայ գրական, հասարակական, քաղաքական գործիչ Երվանդ Ազատյանը:**

**Բանախոսը ներկայացրեց սփյուռքահայ տարբեր գաղութներում գրական հոսանքների ձեւավորման ու զարգացման ընթացքը՝ ի դեմս այն մտավորականների, որոնք ստեղծեցին իրենց դպրոցը՝ հենվելով արեւմտահայ գրական ավանդների վրա, ինչպես նաեւ ինտեգրելով եվրոպական տարրեր:**

**Թեեւ ինչպես 50 տարի առաջ, այնպես էլ այսօր կա այն մտահոգությունը, թե սփյուռքահայ գրականությունը կմահանա, սակայն սփյուռքը շարունակում է նոր գրականություն ստեղծել եւ զարգացնել:**

**Երվանդ Ազատյանը խոսեց Եվրոպա եւ Ամերիկա գաղթած մտավորականության մասին, ովքեր հիմնեցին գրական տարբեր հանդեսներ՝ դրանց շուրջ համախմբելով սփյուռքահայ գրական միտքը:**

**«Այսօր Հայաստանում շատ քիչ մարդիկ կան, ովքեր անդրադառնում են սփյուռքահայ գրականությանը, մինչդեռ անհրաժեշտ է կամրջել Հայաստանի եւ սփյուռքի գրականությունն ու լեզուն, քանզի սփյուռքահայ գրականության ճակատագիրը վտանգված է,-հայտարարեց Ազատյանն ու կոչ արեց ուսանողներին,- պետք է տեր կանգնել սփյուռքահայ գրականությանը, որպես ապագա բանասերներ՝ հայ գրականությունը ճանաչենք իր ամբողջության մեջ, այսօր ազատ ու անկախ Հայաստանն այդ հնարավորությունն ընձեռում է»:**



**Սեպտեմբերի 15-ին ուսանողները եւս մեկ հնարավորություն կունենան լսելու Երվանդ Ազատյանին՝ այս անգամ Զարեհ Մելքոնյանին նվիրված դասախոսությամբ:**

# Երեւանյան 5-րդ միջազգային երաժշտական փառատոն

Այսօր մեկնարկում է «Երեւանյան 5-րդ միջազգային երաժշտական փառատոնը», որը իրականացնում է ՀՀ մշակույթի նախարարությունը եւ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը: Փառատոնը նվիրված է Հայաստանի Հանրապետության 20-ամյակին եւ նվագախմբի 85-ամյա հոբելյանին: Փառատոնի գեղարվեստական ղեկավարներն են Էդուարդ Թոփչյանը եւ Ալեքսանդր Չաուշյանը: ՀՊՖՆ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը երեկ տված ասուլիսում ասաց. «Նշանակալից համերգով ենք սկսում փառատոնը՝ Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայով, որը ես ամբողջ կյանքում վախեցել եմ ղեկավարել: Քսան տարի պատրաստվել եմ դրան՝ ամեն օր մի բան մտածելով, ուսումնասիրելով եւ մինչեւ հիմա վստահ չեմ, որ ամեն ինչ ճիշտ եմ անում: Շատ ուրախ եմ, որ մաեստրո Չեքիջյանի երգչախմբի հետ է լինելու համերգը: Ինձ համար մեծ պատիվ է, որ հնարավորություն ունեմ համագործակցելու համաշխարհային հռչակ ունեցող Կապելլայի հետ: Ունենք հիանալի մենակատարներ, դիրիժորներ եւ հուսով եմ, որ կկարողանանք երաժշտական տոն դարձնել այս մեկ ամիսը»:



Այն բաղկացած է տասը համերգից, որի շրջանակներում փառատոնին կհյուրընկալվեն համաշխարհային դասական երաժշտարվեստի ավելի քան քսանհինգ ներկայացուցիչներ տարբեր երկրներից՝ Ալեքսանդր Չաուշյան, Էշլի Վոս, Եվգենի Սուդբին, Քրիստոֆեր Ուորեն-Գչին (Մեծ Բրիտանիա), Փոլ Մայեր, Ժիլբեր Օդին, Վահան Մարտիրոսյան (Ֆրանսիա), Հեննինգ Քրագերուդ (Նորվեգիա), Դիմուս Պետեն, Կլաուդիո Բոխես ( Գերմանիա), Սամվել Բարսեղյան (Պորտուգալիա), Դայշին Կաշիմոտո (Ճապոնիա), Կոնստանտին Լիֆշից (Ռուսաստան), Կլաուդիո Վանդելլի (Իտալիա) եւ այլք: Փառատոնը հագեցած է Մոցարտի, Բեթհովենի, Բրամսի, Շումանի, Ստրավինսկու եւ այլ գործերով: Վարպետության դասեր կանցկացնեն փառատոնի բոլոր հյուրերը հայ երիտասարդների համար, որը կրթադաստիարակչական մեծ նշանակություն ունի:

Փառատոնի հոբելյանական բացմանը կհնչի Երվանդ Երկանյանի «Հերոսական» Ռապսոդիան՝ նվիրված Անկախության 20-ամյակին եւ Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան:

Արամ Խաչատրյան համերգասրահի դահլիճի նախասրահում գործող լուսանկարչական ցուցահանդեսը մեծ շուք կփոխանցի փառատոնի ողջ ընթացքում: Լուսանկարներում ներկայացվում է Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի գործունեությունը, ինչպես նաեւ հայ դասական երաժշտարվեստի մեծանուն գործիչների արխիվային լուսանկարներ (հեղ. Վահան Քոչար): Փառատոնի ծրագրում՝ սեպտեմբերի 9-ին փառատոնի բացման համերգ, սեպտեմբերի 14, 24, 27-ին կամերային երաժշտության համերգ, սեպտեմբերի 18, 25-ին եւ հոկտեմբերի 1, 6-ին Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ, հոկտեմբերի 9-ին Կոնստանտին Լիֆշիցի մենահամերգ, իսկ հոկտեմբերի 12-ին փառատոնի փակման համերգ՝ ՀՊՖՆ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Երեւանի «Արեւորդի» էկոակումբի Ֆիլմը գերմանական փառատոնում հաղթող է ճանաչվել

Գերմանական NaturVision (Բնության Տեսլական) փառատոնում Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) «Ես համաձայն չեմ» ֆիլմն արժանացել է մրցանակի: Ամենամյա փառատոնն արդեն տասը տարի է, ինչ անցկացվում է Բավարիայի անտառների շրջանում գտնվող Նոյշյոնաու (NeuschФnau) փոքրիկ քաղաքում: Վերջինս իր տեսակի մեջ առավել կարեւոր փառատոներից մեկն է Գերմանիայում: «Արեւորդի» էկոակումբի պատանի սաներ Աննա Պետրոսյանի, Բերտա Մարտիրոսյանի, Սոֆա Պապյանի, Սիրարփի Չիբուխչյանի, Մարիամ Ավագյանի, Տիգրան Սիմոնյանի, Անահիտ Սարոյանի, Անուշ Մկրտչյանի, Ջուլիետա Սաֆարյանի, Էլինա Ալավերդյանի կողմից նկարահանված թափառող շների խնդրի մասին պատմող ֆիլմը ներկայացրել էին «Նորեկների եւ սիրողականների մրցանակ» անվանակարգում:




NaturVision-ի ժյուրին այս անվանակարգում առաջին մրցանակ չշնորհեց. ներկայացված ֆիլմերից եւ ոչ մեկը չէր համապատասխանում բարձր որակի պահանջի չափանիշներին: Սակայն, նրանք շնորհեցին երկրորդ մրցանակ եւ այն առանց որեւէ քննարկման հանձնվեց «Արեւորդի» էկոակումբի սաների նկարահանած «Ես համաձայն չեմ» ֆիլմին:

Միջազգային ժյուրիի անդամներն արձանագրել են, որ ֆիլմը տպավորիչ կերպով անդրադառնում է Երեւանում թափառող շների խնդրին: Մրցանակի շնորհման իրենց հայտարարության մեջ նրանք նշում են. «Հայաստանի պատանիների կողմից պատրաստված մի հուզիչ ֆիլմ է սա: Այնքան իրատեսական, որ նայելիս ցավ ես զգում: Ֆիլմը Հայաստանի մայրաքաղաք Երեւանի փողոցներում թափառող շների ճակատագրի մասին է՝ առանց որեւէ մեկնաբանության եւ առանց հատուկ կինոէֆեկտների գործածության»:

Պատանի «ֆիլմարտադրողներին» փառատոնը շնորհել ոչ միայն վկայագիր եւ փառատոնը խորհրդանշող փայտե քանդակ, այլ նաեւ լրացուցիչ շատ օգտակար նվեր՝ պրոֆեսիոնալ մոնտաժման նորագույն ծրագիր, որը նրանց կօգնի ապագայում էլ ավելի լավ ֆիլմեր պատրաստել:

«Ես համաձայն չեմ» Ֆիլմն այս տարի կմասնակցի նաեւ հոկտեմբերին կայանալիք «Արեւորդի» միջազգային բնապահպանական փառատոնին: Ֆիլմը հասանելի է tvsun-child.am կայքում

# Նարեկ Հարությունյանը արժանացավ մշակույթի նախարարության բարձրագույն պարգեւին



**«Նարեկացի» արվեստի միությունը 7-ամյա պատմություն ունի: Բացման առաջին իսկ ամիսներից արվեստի այդ օջախը առանձնացավ իր ուրույն ձեռագրով, մշակված ու մատուցված թարմ ու ժամանակին համահունչ միջոցառումներով: Միության տարեդարձը շնորհավորելու էին եկել արվեստի ու մշակույթի գործիչներ, գործարարներ, մտավորականներ, ովքեր շնորհավորելով միության տարեդարձը, իրենց ելույթներում բարձր գնահատեցին նրանց դերն ու ավանդը հայ մշակույթի զարգացման գործում:**

**Շնորհավորողների թվում էր նաեւ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանը: Վերջինս իր եւ նախարարի անունից շնորհավորեց «Նարեկացի» արվեստի միության բոլոր անդամներին, եւ միության նախագահ, հիմնադիր Նարեկ Հարությունյանին հանձնեց ՀՀ մշակույթի նախարարության բարձրագույն պարգեւը՝ Ոսկե մեդալը՝ հայ մշակույթի զարգացման ու տարածման ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի համար: Այնուհետեւ պրն Պողոսյանը անդրադարձավ մշակույթի ոլորտում միության կատարած կարեւորագույն ներդրումներին, որոնց թիվն անցնում է 3000-ից: Բացի դրանցից միությունը իրականացրել է շուրջ երկու տասնյակ ձայնասկավառակների, պոեզիայի ժողովածուների ու գեղարվեստական ալբոմների հրատարակում, համերգների, ցուցահանդեսների ու վարպետության դասերի շուրջ 30 մշտական շարքեր եւ բազմաթիվ այլ նախագծեր: Միությունը հատուկ ուշադրություն է դարձրել երաժշտության զարգացմանը եւ 2005-ին հիմնադրեց Կամերային երաժշտության Հայաստանի անդրանիկ ընկերությունը: Բազմաթիվ ու բազմաբնույթ երաժշտական փառատոներ, հոբելյանական համերգներ, երաժշտության օրեր եւ այլն:**

**Հոբելյանական համերգին հրաշալի կատարումներով հանդես եկան Վահան Արծրունին, Ռուբեն Հախվերդյանը, Հասմիկ Բաղդասարյանը, Լեւոն Կարապետյանը, «Սրեղանի» երգչախումբը, Գեւուրջիեւի անվան անսամբլը եւ «Նարեկացի» ժողովրդական նվագարանների համույթը:**

**«Նարեկացի» արվեստի միությունը դարձել է հարազատ օջախ երիտասարդ արվեստագետների համար, որոնք հաճախակի հանդիպումներից, շփումներից լիցքավորված՝ ստեղծագործում են ու հենց այդ աշխատանքներն էլ ներկայացնում արվեստասեր հանրությանը:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Կբացվի նկարիչ Կարեն Սմբատյանի ցուցահանդեսը

**Այսօր, Երեւանում, ժամը 18-ին «Ռուսական արվեստի եւ գիտության կենտրոնում» կբացվի անվանի հայ գեղանկարիչ Կարեն Սմբատյանի 80-ամյակին եւ Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված ցուցահանդեսը: Ներկայացված են նկարչի 30-ից ավելի գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքները, որոնք ճանաչված նկարիչ Զոտտոյի (Գեւորգ Գեւորգյան) խոսքերով. «Հեքիաթային, ֆանտաստիկ, ազնիվն ու գեղեցիկը նկատող նկարչի գործեր են՝ իր ուրույն ձեռագրով»:**

**Կարեն Սմբատյանը ծնվել է 1932-ին Լենինականում: Սովորել ու ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանը: Սմբատյանը բազմիցս մասնակցել է հանրապետական, համամիութենական եւ միջազգային ցուցահանդեսների: Նրա կտավներից շատերն այսօր զարդարում են Տրետյակովյան պատկերասրահի, Արեւելքի ժողովուրդների արվեստի ինստիտուտի, Մոսկվայի «Բաբիզոն» անհատական հավաքածուի, Հայաստանի Ազգային պատկերասրահի, Վաշինգտոնի «Կանոն» ժամանակակից արվեստի ինստիտուտ-թանգարանի, Դետրոյթի «Ռիչարդ Մանուկյան» պատկերասրահի եւ մի քանի հայտնի թանգարանների ու պատկերասրահների հավաքածուները:**

Մ. Մ.

# Սեպտեմբերի 11-ի զոհերի հիշատակին

**Սեպտեմբերի 11-ը ցնցեց աշխարհը: Մի քանի վայրկյանում հողին հավասարվեցին Նյու Յորքի ամենաբարձր երկնաքերները, եւ անշունչ եղան անթիվ ու անհամար զոհեր: Սեպտեմբերի 11-ի անմեղ զոհերի հիշատակին նվիրված Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը կազմակերպել է միջոցառում: Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը սեպտեմբերի 9-ին, ժամը 18.50-ին հատուկ ծրագրով հանդես կգա «Հովեր» երգչախումբը: Միջոցառումը կբացեն Հայաստանում ԱՄՆ դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատար Բրյուս Դոնահյուն եւ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:**

Մ. Մ.

# Ծանրորդների հերթական ստուգատեսը Բուխարեստում

## Հայ ծանրորդներից մեդալների ակնկալիքները մեծ են

Սեպտեմբերի 11-ին Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում կմեկնարկի ծանրամարտի Եվրոպայի մինչեւ 20 եւ մինչեւ 23 տարեկանների առաջնությունը: Մասնակից թիմերից յուրաքանչյուրը առանձին ներկայացուցիչներ կունենա երկու մրցաշարերում:


ՖՈՏՈԼՈՒՐ

Ծանրամարտի Հայաստանի երիտասարդական հավաքականը լրջորեն է նախապատրաստվել այս մրցաշարին՝ ուսումնամարզական վերջին հավաքն անցկացնելով Աբովյանում: Մեդալների համար պայքարի դուրս կգան 9 ծանրորդներ: Մինչեւ 20 տարեկանների մրցաշարում Հայաստանը կանանց մրցավեճում կներկայացնեն Իզաբելա Յայլյանն (53 կգ) ու Ալլա Սամվելյանը (58 կգ): Տղամարդկանց մրցաշարին կմասնակցեն Սմբատ Մարգարյանը (56 կգ) եւ գերծանրքաշային Գոռ Մինասյանը:

Մինչեւ 23 տարեկանների մրցաշարում հանդես կգան 5 ծանրորդներ՝ Ռուբիկ Մանոյանը (62 կգ), Զորիկ Պողոսյանը (69 կգ), Մարտիկ Սիմոնյանը (77 կգ), Աղասի Աղասյանը (77 կգ) եւ գերծանրքաշային Հայկ Հակոբյանը:

Ինչպես միշտ, մեր ծանրորդներից սպասելիքները մեծ են եւ Ռումինիայում էլ նրանցից մեդալների ակնկալիքներ ունենք: Բոլորովին վերջերս հայ պատանի ծանրորդները գերազանց ելույթ ունեցան Լեհաստանում անցկացված ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում: Մրցահարթակ դուրս եկած մեր 9 ծանրորդներն ընդհանուր առմամբ նվաճեցին 6 ոսկե, 1 արծաթե եւ 4 բրոնզե մեդալ: Թիմային հաշվարկով Հայաստանի հավաքականը գրավեց 3-րդ տեղը՝ իրենից առաջ թողնելով միայն Բելառուսի (12+9+4) եւ Ռումինիայի (7+3+7) ծանրորդներին:

Ռումինիայում անցկացվելիք մրցումներին նախապատրաստվող հայ ծանրորդներից երկուսը՝ Իզաբելա Յայլյանն ու Գոռ Մինասյանը գերազանց հանդես եկան Լեհաստանում՝ նվաճելով Եվրոպայի պատանիների չեմպիոնի տիտղոսը: Իզաբելան հաղթեց երկամարտի 170 կգ (77+93) արդյունքով: Իսկ Գոռը պարզապես մրցակցությունից դուրս էր: Երկամարտի նրա արդյունքը՝ 390 կգ (181+209) 48 կգ-ով ավելի էր 2-րդ տեղը գրաված ռուսաստանցի Եգոր Իվանովի ցուցանիշից: Բացի այդ, Գոռը պոկում վարժությունում պատանիների աշխարհի նոր ռեկորդ սահմանեց: Կարծում ենք, որ Ռումինիայում էլ մեր երկու ծանրորդները կրկին վստահ հանդես կգան ու դարձյալ կկանգնեն պատվո պատվանդանի վերին աստիճանին: Մեկնարկող առաջնության մասնակիցներից Աղասի Աղասյանն այս տարվա օգոստոսին Չինաստանում կայացած համաշխարհային 26-րդ Ունիվերսիադայում գերազանց ելույթ ունեցավ՝ հայ մարզիկներից առաջին ոսկե մեդալը պարգեւելով Հայաստանին: Նա երկամարտում ցույց տվեց 337 կգ (151+186) արդյունք:

Սպասելիքները մեծ են նաեւ մեր մյուս գերծանրքաշային Հայկ Հակոբյանից, որը մասնակցելու է մինչեւ 20 տարեկանների մրցաշարին: Հայկն անցյալ տարի նոյեմբերին Լիմասոլում կայացած մինչեւ 20 տարեկանների Եվրոպայի չեմպիոնն է: Նա երկամարտում ցույց տվեց 390 կգ (180+210) արդյունք: Այս տարվա օգոստոսին Հայկը Չինաստանում կայացած Ունիվերսիադայում զգալիորեն բարելավեց ցուցանիշը՝ ցույց տալով 402 կգ (186+216): Սակայն դա բավարար չեղավ մրցանակակիր դառնալու համար: Ճիշտ է, նա կարող էր բրոնզե մեդալ նվաճել երկամարտում, սակայն անձնական ավելի ծանր քաշի պատճառով մրցանակը զիջեց ուկրաինացի Օլեգ Պրոշակին:

Նշենք, որ անցյալ տարի Լիմասոլում կայացած մինչեւ 20 եւ մինչեւ 23 տարեկանների առաջնությունում բացի Հայկ Հակոբյանից, չեմպիոն էին հռչակվել նաեւ Արայիկ Միրզոյանը (77 կգ)՝ 341 կգ (155+186) եւ Հռիփսիմե Խուրշուդյանը (75-ից բարձր)՝ 250 կգ (110+140): Իսկ Աղասի Աղասյանը մինչեւ 77 կգ քաշայինների մրցավեճում դարձել էր արծաթե մրցանակակիր երկամարտի 336 կգ (151+185) արդյունքով:

Սպասելիքներ ունենք նաեւ Ռուբիկ Մանոյանից, որը Լիմասոլում մինչեւ 23 տարեկանների մրցավեճում երկամարտի 270 կգ (125+145) արդյունքով դարձել էր Եվրոպայի փոխչեմպիոն: Այդ առաջնությանը մասնակցած Զորիկ Պողոսյանը (69 կգ) մինչեւ 20 տարեկանների մրցաշարում զբաղեցրել էր 6-րդ տեղը երկամարտի 293 կգ (130+163) արդյունքով: Իսկ Ալլա Սամվելյանը (58 կգ) նույն մրցաշարում գրավել էր 5-րդ տեղը երկամարտի 180 կգ (73+107) արդյունքով: Իհարկե, մրցանակային տեղի է հավակնում նաեւ Սմբատ Մարգարյանը, որը չնայած երիտասարդ տարիքին, արդեն տիտղոսակիր ծանրորդ է: Ճիշտ է, նա անցյալ տարի Լիմասոլում ձախողվել էր՝ 0 ստանալով, սակայն հույս ունենք, որ այս անգամ Բուխարեստում ամեն ինչ նորմալ կընթանա նրա եւ թիմակիցների համար:

Եվ այսպես, սեպտեմբերի 11-ին կտրվի Եվրոպայի երիտասարդական առաջնության մեկնարկը: Այդ օրը մրցահարթակ դուրս կգան Իզաբելա Յայլյանը (53 կգ), Սմբատ Մարգարյանը (56 կգ) եւ Ռուբիկ Մանոյանը (62 կգ):

# Զուլֆալակյանն էլ կատարեց իր ընտրությունը

**Ինչպես տեղեկացրել ենք, սեպտեմբերի 11-ին Ստամբուլում մեկնարկելու է ըմբշամարտի աշխարհի հերթական առաջնությունը, որում բացի մեդալներից, խաղարկվելու են նաեւ Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերը: Առաջինը մրցահարթակ դուրս կգան ազատ ոճայինները, որոնց կազմը հավաքականի գլխավոր մարզիչ Արայիկ Բաղդասյանը հրապարակել էր: Եվ ահա այժմ իր ընտրությունը կատարել է նաեւ հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Զուլֆալակյանը:**

**Ստամբուլում մրցագորգ դուրս կգան Ռոման Ամոյանը (55 կգ), Վահան Ջուհարյանը (60 կգ), Արման Ադիկյանը (66 կգ), Արդեն Զուլֆալակյանը (74 կգ), Արթուր Շահինյանը (84 կգ), Արթուր Ալեքսանյանը (96 կգ) եւ գերծանրքաշային Յուրի Պատրիկեեւը:**



# Քառորդ եզրափակիչի մասնակիցները հայտնի են

**Խանտի Մանսիյսկում շարունակվող շախմատի աշխարհի գավաթի խաղարկությունում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի մասնակիցները: 1/8 եզրափակիչի 8 մրցախաղերից միայն երեքում հաղթողը որոշվեց դասական շախմատի 2 պարտիաների արդյունքով: Չեխ Դավիթ Նավարան 2 պարտիաներում էլ առավելության հասավ ուկրաինացի Յարոսլավ Ժերեբուխի նկատմամբ ու մտավ հաջորդ փուլ:**

**Պայքարը կշարունակի նաեւ Թեյմուր Ռաջաբովը, ով 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց ռուսաստանցի Դմիտրի Յակովենկոյին: Պյոտր Սվիդլերն էլ երկու անգամ հաղթեց Գատա Կամսկուն ու մտավ քառորդ եզրափակիչ:**

**Բու Քսյանզիի եւ Վասիլի Իվանչուկի մրցամարտի ելքը որոշեցին արագ շախմատի երկու պարտիաները, որոնք շահեց ուկրաինացի գրոսմայստերը: Իսկ դասական շախմատի 2 պարտիաներն էլ ավարտվել էին ոչ-ոքի: Չորս պարտիա պահանջվեց նաեւ Վլադիմիր Պոտկինի եւ Ալեքսանդր Գրիշչուկի մրցախաղի հաղթողին որոշելու համար: Դասական շախմատում մրցակիցները մեկական հաղթանակ էին տոնել, իսկ արագ շախմատի մրցախաղը 1,5-0,5 հաշվով շահեց Գրիշչուկը:**

**Ադրբեջանցի Վուղար Հաշիմովը քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճելու համար ստիպված էր 6 պարտիայից բաղկացած մրցախաղ անցկացնել Պետեր Նիլսենի հետ: Հետաքրքրականն այն է, որ բոլոր պարտիաներն էլ արդյունավետ ելք ունեցան: Ի վերջո, 4-2 հաշվով հաղթեց Հաշիմովը:**

**Իսկ ահա Հուդիթ Պոլգար-Լենիեր Դոմինգուեզ, Լազարո Բրուզոն-Ռուսլան Պոնոմարյով մրցախաղերի ելքը վճռվեց միայն կայծակնային մրցախաղում: Հաջողությունն ուղեկցեց Հուդիթ Պոլգարին եւ Ռուսլան Պոնոմարյովին, որոնք հաղթեցին միեւնույն 4,5-3,5 հաշվով:**

# Պարգեւներ 19-ամյա մարզիկին

**Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի լրատվության բաժնից, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանը նվերներ ու դրամական պարգեւներ է հանձնել անվավոր դահուկավազքի աշխարհի երիտասարդների չեմպիոն, աշոցքցի Սերգեյ Միքայելյանին եւ նրա մարզիչ ծնողներին: Նշենք, որ 19-ամյա Սերգեյի մայրը՝ Ալլա Միքայելյանը ԽՍՀՄ բազմակի չեմպիոնուհի է: Ինչպես երեւում է, նրա գեները փոխանցվել են որդուն, որը շարունակում է ընտանեկան ավանդույթները:**

**ՀԱՕԿ-ի նախագահը շնորհավորեց երիտասարդ մարզիկին եւ նրա ծնողներին բարձր նվաճումների համար ու հետագա հաջողություններ մաղթեց: Ուշադրությունից դուրս չմնացին նաեւ Միքայելյան ընտանիքի հովանավորները՝ Հայջրմուղկոյուղի ընկերության տնօրեն, ֆրանսիացի Պատրիկ Լորենը եւ «Գրանդ տորընտո» սուդիս ընկերության տնօրեն Գագիկ Գյուլբուդաղյանը, որոնց եւս Գագիկ Ծառուկյանը նվերներ հանձնեց:**

# Դանիելյանը հաշտություն կնքեց

**Շախմատի Գրան պրիի խաղարկության 2-րդ տուրում Էլինա Դանիելյանը սպիտակներով 55-րդ քայլին հաշտություն կնքեց չինացի գրոսմայստեր Տան Ժոնգիի հետ: Եվս 3 պարտիաներում մրցակիցները ոչ-ոքի խաղացին: Միավորը կիսեցին Ժու Չենն ու Ժուան Լուֆեյը, Ցզյույ Վենզյունն ու Վիկտորիա Չմիլիտեն, Եկատերինա Կովալեւսկայան եւ Աննա Մուզիչուկը:**

**Մրցաշարում իրենց 2-րդ հաղթանակները տոնեցին աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանն ու Ժաո Սյուեն, որոնք 2 միավորով գլխավորեցին աղյուսակը: Յիֆանը հաղթեց մոնղոլ Բաթխույագ Մունգունտուլին, իսկ Սյուեն պարտության մատնեց թուրք Բեթյուլ Յիլդիզին: Առաջատարին կես միավոր է զիջում Աննա Մուզիչուկը: Էլինա Դանիելյանը 0,5 միավորով 9-11-րդ տեղերն է բաժանում Բեթյուլ Յիլդիզի եւ Եկատերինա Կովալեւսկայայի հետ: Աղյուսակը եզրափակում է Մունգունտուլը, որն առայժմ միավոր չունի: 3-րդ տուրում Դանիելյանը սեւերով կմրցի Եվրոպայի այս տարվա չեմպիոնուհի Վիկտորիա Չմիլիտեի հետ:**

# Նոր հաջողություն հայկական հեծանվասպորտում



**Բոլորովին վերջերս Միեր Մկրտչյանը հրապարակային հեծանվավազքի աշխարհի երիտասարդական առաջնությունում 2 արծաթե մեդալ էր նվաճել: Եվ ահա հայկական հեծանվասպորտում նոր հաջողություն գրանցվեց: Դոնեցկում անցկացված խճուղային հեծանվավազքի «Դրուժբա» մրցաշարի բազմօրյա մրցումներում գերազանց հանդես եկավ հեծանվային սպորտի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի սան Հովհաննես Հովհաննիսյանը: Նա բոլորից հաջող հաղթահարեց 430 կմ ընդհանուր մրցատարածությունը, որը մասնակիցներն անցան 5 փուլում: Բոլոր փուլերում էլ հայ հեծանվորդը վստահ ելույթ ունեցավ եւ արժանիորեն դարձավ հեծանվավազքի հաղթող: 2-րդ եւ 3-րդ տեղերը գրավեցին Ռուսաստանի եւ Լեհաստանի ներկայացուցիչները:**

**Ընդհանուր առմամբ մրցումներին մասնակցեցին 16 թիմերի 79 հեծանվորդներ: Հայաստանից մրցումներին մասնակցեցին 6 հեծանվորդներ:**

# Փաշիկյանը գրավեց 22-րդ տեղը

Խանտի Մանսիյսկում ավարտվեց շախմատի մրցաշարը, որում խաղարկվում էր Յուգրայի նահանգապետի գավաթը: Հայաստանը ներկայացրած Արման Փաշիկյանը վերջին երկու տուրերում մեկ միավոր վաստակեց: 8-րդ տուրում նա պարտվեց բելառուս Ալեքսեյ Ալեքսանդրովին, իսկ մրցաշարն ավարտեց ռուսաստանցի Վալերի Արտամոնովի նկատմամբ տոնած հաղթանակով: Փաշիկյանը 9 հնարավորից վաստակեց 6 միավոր եւ մրցաշարի 154 մասնակիցների մեջ զբաղեցրեց 22-րդ տեղը: 9 պարտիաներում Արմանը տոնեց 5 հաղթանակ, 2 պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց 2 պարտություն:

Ռուսաստանցի Օլեգ Պադալյանը 4,5 միավորով գրավեց 68-րդ տեղը: Վերջին 2 տուրերում նա ընդամենը կես միավոր վաստակեց:

Մրցաշարի հաղթող դարձավ ռուսաստանցի գրոսմայստեր Պավել Պոնկրատովը, որը վաստակեց 7,5 միավոր: 8-րդ տուրում Պոնկրատովը հաղթեց ադրբեջանցի Ռաուֆ Մամեդովին, իսկ ավարտական տուրում հաշտություն կնքեց ռուսաստանցի Մաքսիմ Մատլակովի հետ: 10 շախմատիստներ հաղթողից հետ մնացին կես միավորով: Լրացուցիչ գործակիցներով 2-րդ տեղը գրավեց ռուսաստանցի գրոսմայստեր Մաքսիմ Մատլակովը, եռյակը եզրափակեց նրա հայրենակից Իգոր Կուռնոսովը:

# Ընտրվեց նոր նախագահ

Կայացավ հրաձգության Հայաստանի ֆեդերացիայի հաշվետու-ընտրական կոնֆերանսը: Կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ ֆեդերացիայի նախագահ, օլիմպիական չեմպիոն, մեր անվանի հրաձիգ Հրաչյա Պետիկյանը: Նա անկեղծորեն խոստովանեց, որ ներկա պայմաններում այլեւս անկարող է լուծել ֆեդերացիայի առջեւ ծառացած ֆինանսական խնդիրները, ուստի կոնֆերանսին դիմեց հրաժարականի խնդրանքով: Կոնֆերանսի մասնակիցներն ըմբռնումով մոտեցան նախագահի խնդրանքին ու ծափերով ողջունեցին օլիմպիական չեմպիոնի որոշումը:

Կայացած նախագահական ընտրություններում միաձայն ֆեդերացիայի նոր նախագահ ընտրվեց միակ թեկնածուն՝ գործարար Արթուր Հովհաննիսյանը: Նա խոստացավ լուծում տալ առկա խնդիրներին եւ հույս հայտնեց, որ մասնագետները կարդարացնեն սպասելիքները:

Ֆեդերացիայի կոնֆերանսին մասնակցում էր նաեւ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը: Նա իր ելույթում կարեւորեց ֆեդերացիայի նոր ղեկավարության նպատակային աշխատանքը, համապատասխան հանձնարարականներ տվեց նորընտիր գործկոմի կազմին եւ հաջողություններ մաղթեց աշխատանքում:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

